ԻՆՉ ԱՍԱՑ

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԿ-Ի VII ՊԼԵՆՈՒՄԸ ԿՈՄՑԵՐԻՏՄՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ—ԳՅՈՒՂՈՒՄ

ԶԲՈՒՅՑՆԵՐ
ԿՈՄՑԵՐԻՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԱՂՑԱՆՑԻ ՀԱՄԱՐ

ԿՈՒՍՉՐԱՏ 1933 ՑԵՐԵՎԱՆ

329.154 (47-61)
22 NOV 2017

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

ԻՆՉ ԱՍԱՑ ՀԱՄԼԿՑԵՄ ԿԿ-Ի VI ՊԼԵՆՈՒՄԸ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ—ԳՅՈՒՂՈՒՄ

ԶԲՈՒՅՑՆԵՐ
ԿՈՄՅԵՐԻՏԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՈՒՆՅԱՆԻ ՀԱՄԱ

ԿՈՒՍՔՐԱՏ 1928 ՅԵՐԵՎԱՆ

1/3

ՀԱՍՍՐ
Գրադարան
Գրանցում
II-26570գր

Թարգմանեց ռուս. Ա. Տեր-Մկրտչյան
Խմբագրեց Շավարշ Ազնավուրյան
Տեխն. խմբագիր Մ. Նիկրիկ
Սրբագրիչ՝ Ա. Տեր-Մկրտչյան
Հանձնված է արտադրության 23 հունվարի 1933 թ.
Ստորագրված է տպագրության 8 ապրիլի 1933 թ.
Տիրաժ 4000 Հրատ. № 73 106.000 տպ. նշ.

Պետհրատի տպարան, Պատվեր № 211, Գլավլիտ 7706 (բ)

1932 թ. նոյեմբերի 25-ից մինչև 29-ը Մոսկվայում կայացավ կոմյերամիության Կենտրոնական կոմիտեյի վեցերորդ պլենումը:

Պլենումը քննարկեց հետևյալ հարցերը.—Ցեխատարդության մեջ մասսայական-քաղաքական աշխատանք տանելու գործնական միջոցառումները. (ընկ. Կրուպի զեկուցումը): Կոմյերիտմիության գյուղի ղեկավար կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը (ընկ. Անդրեյեվի զեկուցումը): Բարձրագույն դպրոցի մասին կուսակցության և կառավարության վորոշումները իրականացնելու համար կոմյերիտմիության միջոցառումների պլանը (ընկ. Լեչչինների զեկուցումը): «Молодая Гвардия»-յի 1933 թ. հրատարակչության պլանը (ընկ. Տրոիցկու զեկուցումը): Կոմյերիտմիության մասնակցությունը մատակարարման և խորհրդային առևտրի ծավալման աշխատանքի մեջ (ընկ. Գերասիմովի զեկուցումը):

Պլենումում մեծ ճառով հանդես եկան ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար ընկ. Պոստիշևն ու ՀամԼԿՑԵՄ ԿԿ-ի գլխավոր քարտուղար ընկ. Կոսարևը:

Այս հարցերը քննարկելիս պլենումն իր գլխավոր ուշադրությունը դարձրեց կոմյերիտմիության աշխատանքի վրա գյուղում: Այդ բացատրվում է նրանով, վոր

> «սոցիալիստական շինարարության ժամանակակից հատակ առանձնահատկությունները պահանջում են առաջին հերթին մաքսիմալ չափով ուժեղացնել ամբողջ կուսակցության ուշադրությունը դեպի գյուղատնտեսության հարցերը» (Պ. Պոստիշև):

ՀամԼԿՑԵՄ ԿԿ-ի պլենումի վորոշումներն ամենայն պարզությամբ ընդգծում են, վոր աշխատանքը գյուղում այժմ պետք է դառնա կոմյերիտմիության ամբողջ գործունեության կենտրոնը, վորովհետև դասակարգային պայքարի հիմնական հանգույցը ներկայումս գտնվում է հենց գյուղում:

1 Ինչ ասաց ՀամԼԿՑԵՄ ԿԿ-ի VI պլենումը

Հաշվի առնելով կոլտնտեսական շարժման ժամանակահից դրությունը, հաշվի առնելով կուսակցության ցուցումներն այն մասին, որ կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդումը պետք է լինի գյուղում կատարելիք մեր աշխատանքի կենտրոնում, հաշվի առնելով կուրանում տեղի ունեցած դեպքերի դասերը, որտեղ կուլակության փչրանքներին հաջողվեց տանել իրենց հետևից հետամնաց կոլտնտեսականներին և հացամթերումների սաբոտաժ կազմակերպել,—ՀԱՄԼԿԵՄ ԿԿ-ի պլենումը սրեց գյուղական կոմյերիտականների դասակարգային մարտունակությունն ամեն կերպ բարձրացնելու անհրաժեշտության հարցը և դրեց նրանց առաջ մի շարք կարևորագույն, անհետաձգելի խնդիրներ, որոնց իրագործմանը, չկորցնելով վոչ մի որ, պետք է ձեռնամուխ լինի կոմյերիտական գյուղական յուրաքանչյուր բջիջ:

Վորո՞նք են այդ խնդիրները, ի՞նչպես պիտի իրագործել նրանց, ի՞նչ է պահանջվում այժմ գյուղական յուրաքանչյուր կոմյերիտականից:

Հենց այս հարցերի պատասխանին է նվիրված այսորվա մեր պարապմունքը:

I

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակ, երբ պարզ երևում է, որ մեր խորհրդային յերկիրը վերջնականապես հաստատվել է սոցիալիստական ուղու վրա:

Վորքա՞ն նոր գործարաններ, վորքա՞ն նոր դիզանտներ են մտել շարքի մեջ:

Այնտեղ, որտեղ առաջ անմարդաբնակ եր, այժմ ծխում են աշխատավոր մասսաների ջանքերով կառուցված հուժկու ձեռնարկությունների ծխանները:

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ոպորտունիստների դեմ վճռականապես պայքարելով, մենք հաջողությամբ ավարտել ենք առաջին հնգամյակի մեծ պլանը: Մենք մեր արդյունաբերությունը վերածում ենք ամենաառաջադեմ արդյունաբերության ամբողջ աշխարհում: Մեր գյուղատնտեսությունն աշխարհում ամենախոշորն ու առաջավորն է:

Յերկրի ինդուստրացման հաղթանակների հիման վրա, բայշևիկյան կուսակցության ճիշտ լենինյան ղեկավարությամբ, նրան գլխավորող ընկ. Ստալինի առաջնորդության հետևանքով, Խորհրդային Միության պրոլետարիատը կարողացավ չքավորա-միջակային գյուղացիության հիմնական մասսաներին ուղղել դեպի կոլտնտեսային զարգացման ուղին:

Չքավորա-միջակային գյուղացիության յերկու յերրորդը միավորվել են այժմ կոլտնտեսություններում:

Յեվ առաջվա մի անձնյա տնտեսությունների մանր, նեղ ու հալից ընկած հողաշերտերի կնճիռներով կտրտված դաշտերում այժմ ուժգնորեն փռվել են կոլտնտեսական ցանքսերի զանգվածները: Կոլտնտեսությունների թիվն այժմ հասել է մինչև 211 հազարի:

Մեր դաշտերում լայնածավալ փռել են իրենց ցանքսերը «հացահատիկի ֆաբրիկաները»—խորհտնտեսությունները: ԽՍՀՄ-ում ներկայումս գոյություն ունի հինգ հազարից ավելի խորհտնտեսություն:

Խորհտնտեսային և կոլտնտեսային դաշտերում այժմ աշխատում են 141 հազար տրակտոր, 14 հազար կոմբայն, 11·522 ավտոմոբիլ ու այլ մեքենաներ:

Գյուղի կուլտուրականությունն անսահման աճել է: Ցարիզմի ժամանակ 100 գյուղացուց հազիվ միայն տասը գրագետ կգտնվեր: Իսկ այժմ գյուղում 90 տոկոսը գրագետ են: Խորհրդային գյուղում աճել են տասնյակ հազարավոր դպրոցներ, ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ, գրադարաններ և այլ հիմնարկներ, որտեղ խորհտնտեսությունների բանվորները, կոլտնտեսականները և վողջ աշխատավոր գյուղացիությունը տիրապետում են սոցիալիստական կուլտուրային:

Այս տարի խորհտնտեսություններն ու կոլտնտեսություններն ընդգրկել են յերկրի ամբողջ ցանքսային տարածության չորս հինգերորդականը: Ցանքսերի մնացյալ 20 տոկոսն է պատկանում մենատնտեսներին:

Այսպիսով մենք իրավունք ունենք հայտարարելու, որ խորհտնտեսությունները ու կոլտնտեսությունները մեր յերկրում վերջնականապես ամրապնդվել են, որ մենք հիմնականում լուծել ենք կուլակությունը որպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու խնդիրը՝ համատարած կոլեկտիվացման բաղայի հիման վրա:

Այս «հաղթանակը պահվել է շնորհիվ այն բանի, որ մեր կուսակցությունը այս բոլոր տարիների ընթացքում հաստատակամորեն կանգնած է յեղել իր բայշևիկյան դիրքերում, սկզբունքային և գործնական հակահարված տալով լենինիզմի բոլոր և ամեն տեսակ թշնամիներին՝ ոպորտունիստական լաղերից» (Մոլոտով):

Զախջախվեցին աջ և «ձախ» ոպորտունիստների, բուրժուազոդեցիոն վերասերվածների բոլոր հույսերն ու ակնկալությունները:

ները՝ վերջացրած Ռյուտինի հակահեղափոխական խմբով, վորը խոսում եր բացահայտ սպիտակ-գվարդիականության լեզվով և մարտնչում եր կուլակությունը վերականգնելու և կոլտնտեսությունները ցրելու համար:

Կոլտնտեսային ուղին հենց աշխատավոր գյուղացիության մասսաների կողմից այժմ ճանաչված է վորպես միակ ճիշտ յելքը նախկին աղքատությունից ու անկուլտուրականությունից դուրս գալու վորպես տնտեսաբարբության միակ ճիշտ ուղին, վոր տանում է նրանց դեպի նյութական ու կուլտուր-կենցաղային դրության բարելավումը:

Դարձ դեպի անցյալը, դեպի միանձնյա գյուղը,— դարձ դեպի աշխարհակեր-կուլակին ստրկանալը—չի՛ կարող լինել: Այս տարիների ընթացքում կոլտնտեսականներն իրենց սեփական վորձով արդեն համոզվեցին, թե ինչումն է խոշոր կոլեկտիվ տնտեսության առավելությունը: Այս բանն ավելի և ավելի կգիտակցեն նաև այն չքավորներն ու միջակները, վորոնք դեռևս կոլտնտեսություն չեն մտել:

Աշխատավոր գյուղացիությանը կոլտնտեսային ուղու վրա փոխադրելու համար մղված պայքարում կոմյերիտմիությունն ու նրա գյուղական բջիջները ցույց տվին իրենց վորպես կուսակցության առաջին և լավ ոգնականներ: Կոմյերիտականները գյուղում ագիտատորներ եյին հոդուտ կոլտնտեսության, կոլտնտեսությունների մեջ հավաքագրողներ, 1930 թ. անդրանիկ բայլևիկյան ցանքի ժամանակ առաջին անգամ կոլեկտիվ կերպով դաշտ դուրս գալու նախաձեռնողները: Կոլտնտեսությունների ստեղծման համար մղված պայքարում բավականաչափ ամեցին լենինյան կոմյերիտմիության շարքերը գյուղում: Այժմ մեզ մոտ, ԽՍՀՄ-ում կա 3 միլիոն 120 հազար գյուղական կոմյերիտական, վոր միավորված են խորհտնտեսային և կոլտնտեսային 109 հազար բջիջներում, մինչդեռ 1925 թ. գյուղում կար միայն կես միլիոն կոմյերիտական և մոտ 27 հազար բջիջ:

Բայց, յեթե կոմյերիտմիությունը կոլտնտեսությունների ստեղծման գործում, գյուղը զարգացման կոլտնտեսային ուղու վրա շրջադարձելու մեջ կուսակցության առաջին ոգնականը հանդիսացավ, ապա դրանով բոլորովին չեն սպառվում նրա խնդիրները գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարիզում: Այժմ, յերբ խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները վերջնականապես ամրապնդվել են մեր յերկրում, իր ամբողջ հասակովը մեկ ծառացել է խոշոր տնտեսությունների—խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների այդ ահագին մասսայի մեջ գործը ճիշտ կերպով կազմակերպելու բացառապես դժվար ու բարդ խնդիրը:

Ծառացել է իր վողջ հասակով կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման և կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակման խնդիրը, նախկին մանր-սեփականատիրական սովորությունների և ընտելացումների այն ծանր ժառանգությունն արմատախիլ անելու խնդիրը, վորը ծանրացած է յերեկվա նախկին մենատնտեսների՝ այսորվա կոլտնտեսականների վրա, վորը դասակարգային թշնամին աշխատում է ոգտագործել հոդուտ իր շահերի, վորը խանդարում է կարգավորելու կոլտնտեսությունների հետագա աճման և ամրապնդման գործը:

Գյուղի կոմյերիտմիությունն այժմ, միշտ և ամենուրեք այդ խնդիրների մակարդակի վրա կանգնած չի: Կան կոմյերիտականներ, վորոնք կարծում են, վոր յեթե կոլտնտեսություն կա, յեթե գյուղացին մտել է կոլտնտեսության մեջ, ապա դրանով այդ գյուղացին դարձել է նոր մարդ և վերադաստիարակման կարիք չի զգում: Կարծում են, վոր յեթե կուլակությունը հիմնականում լիկվիդացիայի յե յենթարկված, ապա այլևս դասակարգային պայքար գոյություն չունի:

Այսպիսի ինքահանգստացումը, «դավինների վրա հանդչելու» նման յերևույթն ոպորտունիզմի մի տեսակն է, վորի դեմ պետք է ամենաանխնա կռիվ հայտարարվի:

Բարձրացնել գյուղական կոմյերիտականների մարտական պատրաստականությունը՝ դասակարգային թշնամիների դեմ կռվելու համար, ջախջախելով ոպորտունիստական ինքնահանգստացումը, մոբիլիզացիայի յենթարկել գյուղի յուրաքանչյուր կոմյերիտականի՝ կռվելու ընդդեմ կոլտնտեսականների մեջ հանդես յեկող կուլակային ազդեցությունների, ամենայեռանդուն կերպով աշխատելու կոլտնտեսությունների ամրապնդման համար—այսպիսին և ներկա մոմենտում լենինյան կոմյերիտմիության կարևորագույն և ամենից ավելի հրատապ խնդիրը:

Գյուղական կոմյերիտականները պետք է գործով ապացուցեն, վոր իրենք կոլտնտեսություններն ամրապնդելու աշխատանքում նույնպես, ինչպես առաջ, կոլտնտեսություններն ստեղծելու գործում, հանդիսանում են մեր բայլշևիկյան կուսակցության առաջին և լավ ոգնականները:

2 Ինչ ասաց համ. ԼԿՑԵՄ ԿԿ-ի VI պլենումը

II

Կոլտնտեսական շարժման մեջ ձեռք բերած հաջողությունները մեզ իրավունք չեն տալիս ձեռքներս ծալելու: Մեր կոլտնտեսություններից շատ-շատերի մեջ դեռևս կան անչափ անկարգություններ, անտնտեսություն, վրիպումներ, սխալներ և այլասերումներ:

Կոլտնտեսության արտաքին ձևը դեռևս ամենուրեք ամրապնդված չէ: Վատ է կարգավորված աշխատանքի հաշվառումը բրիգադներում և մուտքի ու ելքի հաշվառումը կոլտնտեսությունների մեջ: Շատ կոլտնտեսությունների մեջ ընդհանրապես չկան արտադրական մնայուն բրիգադներ: Դեռևս գոյություն ունի սխալ ավանսավորում և յեկամուտների սխալ բաշխում:

Շատ կոլտնտեսություններում թագավորում է դիմադրությունը, անպատասխանատվությունը՝ ինվենտարի ոչնչացման, ձիերին խնամելու գործում, և այս պատճառով վոչնչանում ու ժամանակից շուտ շարքից դուրս են գալիս տրակտորները, մեքենաները և անասունները:

Շատ կոլտնտեսություններ չունեն արտադրական հստակ պլաններ, ուղղնում են վարչա-տնտեսական, վերադիր և ամեն տեսակի այլ ծախքերը, իսկ կոլխոզային կոմյերիտական բջիջները, վորպես կանոն, դեռևս չեն զբաղվում այս բոլոր հարցերով, նրանց կողքով են անցնում:

Շատ կոմյերիտականներ դաշտում հանդիսանում են ամենալավ հարվածայինները: Սակայն, կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման գործում կոմյերիտական բջիջների կարգավորող դերը ծայր աստիճանի աննշան է, հաճախ այդպիսին նույնիսկ բոլորովին չի նկատվում: Կոլտնտեսության արտադրական կյանքում տնտեսական հարցերի լուծման մեջ, աշխատանքի հաշվառման ու կազմակերպման կարգավորման գործում, գյուղական բջիջները, վորպես ամբողջ յերիտասարդության իրական կազմակերպիչներ—դեռ չեն դարձել: Մինչդեռ աշխատանքի կազմակերպման մեջ յերևան յեկող անկարգություններն այն հետևանքն են ունենում, վոր հողը վատ է մշակվում, վոր ցանքն ու բերքահավաքը տեղի յեն ունենում ուշացումով, վոր դաշտերը ծածկվում են մոլախոտով, վորի հետևանքով և մեր կոլտնտեսություններում բերքատվությունը դեռևս շատ ցածր է:

Իհարկե, բայշևիկներին վայել չի «ա՛խ» ու «վա՛խ» քաշել և հիասթափվել այս թերությունների հանդեպ: Մեծ քանակությամբ բանվորական ձեռքերով, հողի հսկայական զանգվածնեբով, հարուստ ինվենտար ունեցող խոշոր կոլեկտիվ տնտեսության կազմակերպման գործը, կոլտնտեսականների համար, վորոնք դեռ յերեկ աշխատում եյին մասնավոր դաճաճ տնտեսության մեջ,—նոր գործ է:

Հատկապես այս պատճառով մենք պետք է վոչ թե ձեռներս ծալենք թերությունների հանդեպ, այլ ամենայեռանդուն ձևով կռվենք կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման համար, այս գործի պրոլետարական ճիշտ ղեկավարման համար:

Կոլտնտեսականների փորձի և դիտելիքների բացակայությունը չի հանդիսանում կոլտնտեսություններում նկատվող տնտեսական բոլոր անկանոնությունների միակ պատճառը, կոլտնտեսականներն իրենց գիտակցության մեջ կրում են նախկին մանր-բուրժուական սովորությունների ու ընտելացումների մեծ բեռը: Կոլտնտեսություններում կատավող կուլակային, վնասարարական, կազմալուծիչ աշխատանքի փաստերն առկա յեն: Այդ պատճառով եկ կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդումը քաղաքական կարևորագույն խնդիր է, վորպես եկոնոմիկայում և գյուղի աշխատավորության գիտակցության մեջ յեղած կապիտալիզմի մնացորդները հաղթահարելու, կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակման համար մղվող պայքար:

Դեռևս շատ կոլխոզնիկներ կոլտնտեսական գույքին հաճախակի նայում են վորպես «ընդհանուր, վոչ վոքի չպատկանող, կաղյոննի բարիք», վորը «կարիք չկա խնայելու»: Նրանք կոլտնտեսության մեջ աշխատում են վո՛չ այնպես հոգատարությամբ ու ջանասիրությամբ, ինչպես իրենց նախկին տնտեսության մեջ, իրենց նախկին հողաբաժնի վրա: Նրանք դեռևս չեն կարողանում ամեն անգամ տեսնել, ճանաչել դասակարգային թշնամուն, վոր սողոսկել է կոլտնտեսություն ու այնտեղ իր վնասարար գործն է կատարում, և հաճախ ընկնում են նրա քայքայիչ ազդեցության տակ:

Պետք է հիշել, վոր կոլտնտեսության մեջ վոչ թե ավարտվում, այլ միայն սկսվում է կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակման գործը:

Հենց այդ պատճառով եկ մեր առաջ այժմ, քան յերբևիցե ուր կերպով կանգնած է կոլտնտեսությունների ղեկավարների ու կազմակերպիչների բայշևիկյան կադրեր նախապատրաստելու հարցը:

Կոլտնտեսությունները կարիք ունեն կայուն ղեկավարների, իրենց աշխատանքի ու տնտեսության լավ կազմակերպիչների, իրենց նոր կյանքը բայշևիկորեն ղեկավարողների. այդ կարիքը

շատ մեծ է: Հոկտեմբերի 15-ամյակի առթիվ գրած իր հոդվածում ընկ. Պոստիշևը մատնանշում է.

«...Խորհտնտեսային-կոլտնտեսային գյուղի համար կադրեր պատրաստելու հարցը դրվում է առանձնակի սրությամբ: Մեզ անհրաժեշտ են սոցիալիստական գյուղատնտեսության կազմակերպիչներ և բարձրորակ, հաստատակամ ու գրագետ քաղաքական ղեկավարներ: Եթե ժողովրդական տնտեսության վորևե ճյուղում վճռական ֆակտորը վերջին հաշվով կադրերի վորակն է, ապա առավել մեծ չափով այս վերաբերում է գյուղատնտեսությանը, հատկապես նրա զարգացման ժամանակակից ետապում: Կադրերի պրոբլեմը ներկայումս գյուղատնտեսության մեջ հանդիսանում է վորպես ամենակենսական, հրատապ պրոբլեմ»:

Ինժեներների և տեխնիկների համագումարում իր ելույթում ընկ. Մոլոտովն ասաց, թե մեզ «ամենից առաջ անհրաժեշտ է ունենալ խոշոր գյուղատնտեսության զանազան ճյուղերի համար տասնյակ և հարյուր հազարավոր վորակյալ ղեկավարներ»:

Ի՞նչպես ստեղծել այդպիսի կադրեր:

Այստեղ խոշոր դեր պիտի կատարեն մեր ուսումնական հիմնարկները: Պատահական չեր, վոր Համկ(բ)կ ԿԿ-ն վորոշեց բոլոր կոմԲՈՒՀ-երը վերակազմել գյուղատնտեսական բարձրագույն դպրոցների: Պատահական չեր, վոր ՀամԼԿԵՄ ԿԿ-ի վեցերորդ պլենումը հատուկ ղեկուցում լսեց բարձրագույն դպրոցում կոմյերիմոլության աշխատանքի մասին, նշելով կոմյերիտական կազմակերպությունների ծրագիրը՝ ուսանողների—ապագա մասնագետների ուսման վորակի բարձրացման գործում:

Սակայն բանը միայն դպրոցների մեջ չէ: Գլխավոր գործը նրանումն է, վորպեսզի առաջ քաշել, նախապատրաստել և դասակարգայնորեն կոփել կադրեր, խորհտնտեսությունների ամենաառաջավոր բանվորներից, ամենաառաջավոր կոլտնտեսականներից: Ընկ. Մոլոտովը մատնանշում եր, վոր մեզ անհրաժեշտ «կադրերն իրենց հիմնական մասսայով չեն կարող առաջ չքաշվել հենց իրեն կոլտնտեսական շարժման կողմից, չեն կարող շաճել կոլտնտեսական հաղթական շինարարության բազայի վրա»:

Ավելի համարձակորեն առաջ քաշել, սովորեցնել ու նախապատրաստել ամենալավ, ստուգված և հեղինակություն վայելող կոմյերիտականներին կոլտնտեսային արտադրության կազմակերպիչների, կոլտնտեսությունների նախագահների, բրիգադիրների,

հաշվետարների, հաշվապահների, հաշվառողների, դաշտավարների, գյուղատնտեսների դիրքերում,—այս է մեր կոմյերիտական բջիջների մարտական խնդիրը գյուղում:

Կոմյերիտական ակտիվի կադրերը գյուղում պիտի դառնան լայնառատ աղբյուր, վորտեղից ուժեր կվերցվեն առաջ քաշելու խորհտնտեսային-կոլտնտեսային արտադրության ղեկավար պոստերի համար:

III

Կոլտնտեսական սեփական, պրոլետարական կադրերի կարիքն առանձնապես սուր է, վորովհետև դասակարգային թշնամին քնած չէ, գործում է և ամենուրեք վնասում:

Վորովհետև չի կարելի կարծել, վոր յեթե կուլակությունը վորպես դասակարգ հիմնականում լիկվիդացիայի յե յենթարկված, ապա նա արդեն դինաթափվել է և դադարել է կռվել կոլտնտեսականների դեմ, կուսակցության ու խորհրդային իշխանության դեմ:

«Իհարկե, կուլակն այժմ այնպիսի ուժ չէ, վորը կարող է բացարձակ կռիվ մղել: Վո՛չ, նա ճնշված ու մղված է հետին պլանը, ուժեղ հարված է ստացել և անցել է ստվերի տակ» (Մոլոտով):

Կուլակը խիստ ջարդված է, բայց դեռ վերջնականապես ջախջախված չի: Կուլակն այժմ նվազած ու դաղդաղած է, նա խցկվում է բոլոր ծակերը: Գյուղում դեռևս քիչ չեն բնակվում մեր կողմից ջարդված կուլակության, սպիտակ-գվարդիական սպայության, վաճառականության և այլ բեկորները:

Իհարկե, կուլակն այժմ կոլտնտեսություններին դեմ չի գնում ուղղակի կերպով: Նա կոլտնտեսություններին դեմ չի գնում բացահայտ գրոհով, ինչպես այդ տեղի յեր ունենում յերկու-յերեք յորս տարի առաջ, կոլտնտեսությունների ստեղծման մոմենտին: Կուլակը հաշվի առավ, վոր աշխատավոր գյուղացիության մասսան հաստատապես կանգնել է կոլտնտեսային ուղու վրա: Բայց նա վայր չդրեց իր զենքերը: Նա սկսեց ավելի խորամանկորեն գործել, ամեն կերպ աշխատում է խցկվել կոլտնտեսության մեջ, վորպեսզի ներսից քայքայի նրան:

Կուլակը ձգտում է զրկել կոլտնտեսությունն իր սոցիալիստական բովանդակությունից և եությունից, կառչելով կոլտնտեսականների մեջ դեռևս ապրող մանր-սեփականատիրական սովորություններից և, հրահրելով այդպիսիները, հակադրել նրանց կոլ-

տնտեսության սոցիալիստական հիմունքներին, չրջել կոլտնտեսային գործերն ըստ իր ցանկացածի:

Կոլտնտեսությունը սոցիալիստական տիպի ձեռնարկություն է: Ինչո՞ւ:

Առաջին, վորովհետև կոլտնտեսությունները կազմակերպված են պրոլետարական պետությանը պատկանող հողի վրա: Շատ կոլտնտեսություններ աշխատում են ՄՏԿ-ի տրակտորների ոգնությամբ, վորոնք նույնպես սոցիալիստական պրոլետարական պետության սեփականությունն են հանդիսանում: Չերկրորդ, վորովհետև կոլտնտեսության մեջ արտադրության հիմնական միջոցների նկատմամբ նախկին մասնավոր սեփականությունը գոյություն չունի: Ամբողջ հիմնական ինվենտարը—բանող ձիերը, յեզները, մեքենաները, տնտեսական կառուցումները—պատկանում է կոլտնտեսականների կոլեկտիվին. հանդիսանում է նվիրական և անձեռնմխելի սոցիալիստական-հասարակական սեփականություն:

Չերրորդ, կոլտնտեսությունը սոցիալիստական տնտեսություն է այն պատճառով, վոր կոլտնտեսության մեջ, արտադրության հիմնական միջոցների հանրայնացման հետևանքով, գոյություն չունի մարդու շահագործումը մարդու կողմից: Կոլտնտեսության մեջ չի կարող տեղի ունենալ մի մարդու հարստացում մյուսի աշխատանքի հաշվին այն պատճառով, վոր կոլտնտեսության մեջ գոյություն ունի կոլեկտիվ աշխատանք, յեկամտի բաշխումն ընթանում է ըստ սոցիալիստական կանոնի—«ով չի աշխատում, նա չի ուտում»,—ով ավելի շատ և ավելի լավ է աշխատում, նա ավելի շատ էլ ստանում է:

Ահա կոլտնտեսության մեջ արտադրության և բաշխման հենց այս հիմնական սկզբունքներին է ձգտում հարվածել կուլակը, ցանկանալով կոլխոզները վերածել կեղծ-կոլտնտեսությունների, ցանկանալով կասեցնել կուլակի համար լիակատար ու վերջնական խորտակում բերող կոլտնտեսային շարժման հետագա աճումը:

Ամենից առաջ, կուլակներն աշխատում են հարվածել կոլտնտեսության և պրոլետարական պետության փոխհարաբերություններին:

Ամենքին հայտնի յե, թե պրոլետարական պետությունը վորպիսի խոշոր—մեքենա-տեխնիկական, գյուղատնտեսական, վարկային, ապրանքային և կազմակերպական-կուլտուրական — ոգնություն է ցույց տալիս կոլտնտեսություններին: Առանց պետության այս ոգնության, կոլտնտեսությունների տնտեսական հզորության աճումն անհնար է: Պրոլետարական պետության տնտեսական ճիշտ

քաղաքականությունն է հենց նախապատրաստել աշխատավոր գյուղացիության շրջադարձը դեպի սոցիալիզմ, դեպի կոլտնտեսությունների ուղին: Պետական արդյունաբերության, հատկապես ծանր ինդուստրիայի և գյուղատնտեսության մեքենաշինարարության հաջողություններն են կազմել և կազմում կոլտնտեսային շինարարության հաջողությունների հիմքը: Թե՛ պետական ձեռնարկությունները (գործարաններ, ֆաբրիկաներ, խորհտնտեսություններ, ՄՏԿ) և թե՛ կոլտնտեսությունները մտնում են մեր յերկրի սոցիալիստական տնտեսության մեջ, միավորվում են միասնական տնտեսական պլանով և պրոլետարական պետության ղեկավարությամբ: Դրա համար էլ պետության հանդեպ կոլտնտեսություններն ունեն իրենց պարտավորությունները, վորպիսիները կատարում են առաջին հերթին (հացամթերումներ, գյուղատնտեսական հարկ և այլն): Այս պարտավորությունների կատարումից է կախված մեր համապետական տնտեսական պլանը, մեր գործարանների ու ֆաբրիկաների աշխատանքը, վորից էլ իր հերթին կախված է և մեքենաների, պարարտանյութերի, արդյունաբերական ապրանքների սպասող կոլտնտեսությունների հետագա ամրապնդումը: Ուստի և կոլտնտեսության՝ վորպես սոցիալիստական ձեռնարկության՝ ամրությունը վորոշվում է ամենից առաջ պրոլետարական պետության հանդեպ իր ստանձնած պարտականությունների ճիշտ կատարումով:

Ահա հենց ամենից առաջ այս բնագավառն են առնում իրենց գնդակոծման տակ կուլակության մնացորդները:

Կառչելով այն հետամնաց կոլտնտեսականների խմբակային, սեփականատիրական շահերին, վորոնք ցանկանում են ամբողջ հացը պահել իրենց համար, կուլակային տարրերը նրանց մեջ ագիտացիա յեն մղում ընդդեմ հացամթերումների, դրդում են կոլտնտեսություններին բաժանելու ամբողջ հացը, թաղցնելու կոլտնտեսային բերքի չափերը պետական հաշվառումից: Սրանով իսկ կուլակները ցանկանում են հետամնաց կոլտնտեսականների մանր-սեփականատիրական շահերը հակադրել պրոլետարական պետության և կոլտնտեսային վոլոշ շարժման շահերին: Սրանով իսկ կուլակությունը ձգտում է պառակտում ստեղծել պրոլետարական պետության և կոլտնտեսությունների միջև, գյուղի և քաղաքի միջև, պրոլետարիատի և կոլտնտեսական գյուղացիության միջև: Սրանով իսկ կուլակը ձգտում է կոլտնտեսությունը վերածել շահագործողներին ձեռընտու,—պրոլետարական պետության դեմ, մեր սո-

ցիալիստական շինարարության տեմպերի դեմ, հանդես գեկող կեղծ կոլտնտեսության:

Մյուս կողմից կուլակության փչրանքները փորձում են հարվածել նաև կոլտնտեսության հենց հասարակական սեփականությանը: Այստեղ կուլակը գործում է ոչ միայն որպես մնասարար, որ ջարդում է տրակտորները, փչացնում է ձիերը, կուլակը ոչ միայն հրում է կոլտնտեսականին անվստահ վերաբերմունքի՝ դեպի ընդհանուր կոլտնտեսային դուրքը, բորբոքելով նրա մանրսեփականատիրական սովորությունը՝ դնահատել միայն այն, ինչ որ «իմն է», դնահատել միայն «անձնական բարիքը»: Նա փորձ է անում կազմակերպել հանրային բարիքի ուղղակի մասսայական կողոպուտ, դրդելով կոլտնտեսականներին՝ գողանալու կոլտնտեսային հացը և՛ դաշտերից, և՛ կալերից, և՛ չամարաններից: Սրանով իսկ կուլակը ձգտում է քայքայել, վոչնչացնել կոլտնտեսային հասարակական սեփականությունը, որի վրա հենվում է կոլտնտեսային ամբողջ արտադրությունը:

Կուլակն ամեն կերպ ձգտում է կազմալուծել սոցիալիստական աշխատանքային դիսցիպլինան կոլտնտեսության մեջ: Նա արտադրական մնայուն բրիգադներին դեմ է դուրս գալիս: Նա կոլտնտեսությունների մեջ է խոթում աշխատանքի կազմակերպման այնպիսի ձև, ինչպիսին է «ծխային» բրիգադը, որի դեպքում կոլտնտեսականներն աշխատում են հերթով (յուրաքանչյուր ծխից մի հոգի հերթով անցնում է բրիգադի մեջ), որի դեպքում թաղավորում է դիմադրությունը, հոսունությունը և թափթփվածությունը: Նա կոլտնտեսականների մեջ ամեն կերպ ագիտացիա է մղում աշխատանքի դուրս չգալու, ձգտելով ավելացնել կոլտնտեսության մեջ դատարկապորտների և ձրիակերների թիվը, որոնք ապրում են «հեշտ աշխատանքով»—սպեկուլյացիայով և գողությամբ: Այս ամենով կուլակը հարվածում է կոլտնտեսության հիմքին—կոլեկտիվ աշխատանքին, հարվածում է աշխատանքի արտադրողականությանը: Իսկ «աշխատանքի արտադրողականությունը վերջին հաշվով ամենագլխավորն է նոր հասարակարգի հաղթանակի համար»,—ասում էր Լենինը:

Նպատակ ունենալով քայքայել կոլտնտեսությունը ներսից, կուլակային տարրերն ամեն կերպ ձգտում են տապալել կոլտնտեսության մեջ բաշխման սոցիալիստական «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքը: Կուլակը խցկում է կոլտնտեսություններում հավասարեցումը, այսինքն՝ աշխատանքի արդյունքների բաշխումը հավասար կերպով ամենքի միջև, անկախ այն բանից, թե

մեկն աշխատել է, իսկ մյուսը լողրություն արել, վորպեսզի հետո կոլտնտեսական—հարվածայինին ասի. «տեսնո՞ւմ ես, քո ջանքերն ապարդյուն անցան, մենք նույն է, դու ստացար այնքան, վորքան նա, ով իր քեֆին ման եկավ»: Սրանով իսկ կուլակը ձգտում է կոլտնտեսությունը վերածել կեղծ—կոլտնտեսության, վորտեղ լոդրերն ու ձրիակերներն ապրում ու հարստանում են իսկական կոլտնտեսականների աշխատանքի հաշվին:

Դասակարգային թշնամին այսպիսի ճանապարհներով ձգտում է կազմալուծել մեր կոլտնտեսությունները, սնամեջ դարձնել նրանց սոցիալիստական բովանդակությունը:

Կուլակային տարրերն ամեն կերպ ձգտում են ներս սողոսկել կոլտնտեսությունները, հասնել կոլտնտեսային ղեկին և իրենց ձեռքը գցել կոլխոզի տնտեսության բոլոր գլխավոր լծակները (պլանավորում, հաշվառում, վերահսկողություն, գույքի և արտադրանքի պահպանություն, հաշվետվություն և այլն): Նրանք ամեն կերպ աշխատում են իրենց հետևից տանել վոչ միայն կոլտնտեսականների հետամնաց մասսաներին, այլև կոմյերիտականներին ու կոմունիստներին:

Կուլակության ընդդիմադրությունն իր արտացոլումը գտնում է քաղաքականապես անկայուն կոմունիստների և կոմյերիտականների շրջանում: Նա սնում է կուսակցության և կոմյերիտմիության շարքերում աջ ոպորտունիզմը, վորը հանդիսանում է տվյալ ետապի գլխավոր վտանգը: Կուլակները գործադրում են ամեն տեսակի խորամանկություն, լարում են ամեն տեսակի թակարդներ, վորպեսզի կազմալուծեն կոմունիստներին ու կոմյերիտականներին, նրանց փափկամարթներ ու կարճատեսներ դարձնեն, նրանց իրենց գործակալները, իրենց կողմնակիցները, իրենց ձայնատուները դարձնեն:

Ցավ տեղ—տեղ կուլակին հաջողվում է այս բանը: Հատկապես հենց սրա մասին են խոսում Հյուսիսային Կովկասում տեղի ունեցած դեպքերի դասերը, առաջին հերթին Կուբանում, վորտեղ կուլակության փչրանքներին հաջողվել էր կազմակերպել 1932 թվի հացամթերումների և աշնանացանի սաբոտաժը:

Ահա թե ինչու պայքարը կոլտնտեսությունների կազմակերպական—տնտեսական ամրապնդման համար ներկայիս կենտրոնական խնդիրն է:

Զե՞ վոր կոլտնտեսային շարժման ներկա ետապում հենց կոլտնտեսությունների կազմակերպական—տնտեսական ամրապնդման շուրջն է կապված՝ մեր կողմից ջախջախված կուլակության փչր-

բանիների դեմ վարելիք դասակարգային կռվի ամենասուր հանգույցը:

Այս վկայում է այն բանի մասին, որ մենք վոչ մի դեպքում չենք կարող բթացնել մեր դասակարգային զգոնությունը:

Մենք վոչ մի դեպքում չպետք է աչքաթող անենք այն, որ յերկրորդ հնգամյակում ել «դեռևս անխուսափելի յե դասակարգային պայքարի սրումը առանձին մոմենտներում և մանավանդ սոցիալիստական կառուցման առանձին շրջաններում և առանձին բնագավառներում, որոնք դրա հետ մեկտեղ ընդգծում է բուրժուական ազդեցությունների պահպանման, իսկ միքանի դեպքերում նաև ուժեղացման անխուսափելիությունը աշխատավորության առանձին շերտերի և խմբերի մեջ, դեռևս յերկար ժամանակի ընթացքում պրոլետարիատին խորթ դասակարգային ազդեցությունների թափանցման անխուսափելիությունը բանվորական միջավայրի և նույնիսկ կուսակցության մեջ» (XVII կուսկոնֆերենցիա):

IV

Կուլանի դեպքերի դասերը գյուղական բոլոր կոմյերիտականների համար ամենալուրջ նախազգուշացումներն են այն մասին, թե ինչ հետևանք են ունենում ինքնահանգստացումն ու բարեհոգությունը, վորոնք դասակարգային սուր պայքարի պայմաններում հանդիսանում են ոպորտունիզմի անմիջական արտահայտություններ:

Ինչո՞ւմն է այդ դեպքերի եությունը:

Հյուսիսային Կովկասը համատարած կոլեկտիվացման շրջան է: Հյուսիսային Կովկասում կուլակությունը վորպես դասակարգ հիմնականում լիկվիդացիայի յե յենթարկված, ջախջախված, արտադրության միջոցներից զրկված է:

Հյուսիսային Կովկասի ցանքային տարածության 90 տոկոսն ընդգրկում են կոլտնտեսությունները ու խորհտնտեսությունները: Անցյալ տարի Հյուսիսային Կովկասի կոլտնտեսությունները ու խորհտնտեսությունները պետությանը հանձնեցին 200 միլիոն փութ հացահատիկ: Այս վկայում է սոցիալիստական խոշոր արտադրության մեծագույն հաջողությունների մասին, նրա ապրանքայնության հսկայական աճման մասին, վորովհետև մինչև հեղափոխական շրջանի նույնիսկ ամենալավ բերքատու տարիներում Հյուսիսային Կովկասը յերբեք այդքան ապրանքային հացահատիկ չեր արտադրել:

Այս հաջողությամբ արբեցած հյուսիսային-կովկասյան խորհրդային և կուսակցական կազմակերպությունները թուլացրին դասակարգային զգոնությունը և ժամանակին հաշվի չառան, վոր լիկվիդացիայի յենթարկված կուլակության և սպիտակ-գվարդիական հակահեղափոխության մնացորդները ճկունությամբ փորձում են սողոսկել կոլտնտեսությունները: Ցավ իրոք, Հյուսիսային Կովկասի մի ամբողջ շարք կոլտնտեսություններում նրանք ձեռք բերին ղեկավարությունը, դրավեցին կոլտնտեսային ապարատի կարևորագույն ողակները (անտեսավար, հաշվետար, կշռար, հաշվող և այլն):

Կուբանի դեպքերն առանձնապես ուսանելի են հենց այս տեսակետից. այստեղ հաշվապահները, հաշվետարները, պահեստապետները, իսկ հաճախ վարչության անդամները, բրիգադիրները և նույնիսկ կոլտնտեսության նախագահները նախկին ստանդարտային ատամաններ եյին, սպաներ, ուրյադնիկներ, տերտերների տղաներ և այլն: Իրենց հակահեղափոխական հոգու վողջ եությամբ ատելով կոլխոզներն ու պրոլետարիատի դիկտատուրան, նրանք կոլխոզներում կազմակերպում եյին սիստեմատիկ վնասարարություն և սաբոտաժ: Նրանք անում եյին «ամեն բան, ինչ վոր իրենցից կախված եր», վորպեսզի ցանեն չհերկված հողի մեջ, տրակտորներին զրկեն վառելանյութից, նրանց դիմաղուրկ անեն, թալանեն կոլտնտեսության հացահատիկը, կազմակերպված ձևով դողանան կոլտնտեսային դույքը, ծաղրեն ամենանվիրված կոլտնտեսականներին, խառնելով կամ բոլորովին չպահելով աշխորների դրանցումները, արդյունքների բաշխման ժամանակ հավասարեցնելով լոդրին հարվածայինի հետ:

Նրանք կարողացել եյին մի շարք կոլտնտեսությունների մեջ իրենց ազդեցության տակ առնել վոչ միայն կոլտնտեսականների հետամնաց մասին, այլև գյուղական կոմունիստների և կոմյերիտականների անկայուն մասին և իսկական սաբոտաժ կազմակերպել կուսակցության ու խորհրդային իշխանության միջոցառումների վերաբերմամբ:

Պահելով իրենց ձեռքում պլանավորումը, հաշվառումն ու վերահսկողությունը, յերկրամասի մի շարք շրջաններում կուլակությունը կազմակերպված ձևով ուղղակի թաղցնում եր պետությունից կոլտնտեսային հացահատիկը:

Կանևսկի ռայոնի «Սերմաշատոյ» կոլտնտեսության նախագահ յենթակուլակ Շչերբինը, վոր սողոսկել եր կուսակցության մեջ, թաղցրել եր 540 փութ հացահատիկ: «Կրասնի պարտիզան»

11-26570/2
ՍԱՀՄԱՆ
ՀԱՍԱՐ

կոլտնտեսության նախագահ Զապաշնին, վորը նույնպես խցկվել եր կուսակցության մեջ, թաղցրել եր մոտ 2 հազար փութ հացահատիկ:

Վորպեսզի հացահատիկը թաղցնեն պետությունից, հակահեղափոխական տարրերն առանձնապես աշխատել եյին խառնել հաշվառումը: Ստարոմանսկի ռայոնի Պրիյեյսկի կոլտնտեսության մեջ կոլտնտեսության նախագահ Զուպորնոյը և բջիջի քարտուղար Գումենկոն կազմել եյին կեղծ տեղեկանքներ: Կոլտնտեսությունն ունեցել եր 688 ցենտներ գարնանացան ցորեն, իսկ տեղեկանքների մեջ ցույց եր տրված միայն 600 ցենտներ: Կոլտնտեսությունն ունեցել եր 789 ցենտներ աշնանացան ցորեն, իսկ ըստ ամփոփումների—միայն 407 ցենտներ. ավելի քան 400 ցենտներ լավ տեսակի ցորեն թաղցված եր յեղել վորպես տականք:

Հացահատիկը թաղցնելու «փորձված» միջոց է յեղել նաև բերքավության չափերի մասին սխալ տեղեկություններ տալը: Մինչև վերջին որերը Բոյկո-պոպուրնովսկի (Տիմաշեվսկի ռայոն) գյուղխորհրդի նախագահ Բելաուսովը հաղորդում եր, վոր մեկ հեկտարը միջին թվով տվել է 2,6 ցենտներ: Շրջանային կազմակերպությունները հավատացել եյին Բելաուսովին: Անցկացված ստուգումը ցույց տվեց, վոր մեկ հեկտարի բերքատվությունն այդ գյուղխորհրդում յեղել է 6 ցենտներ, այսինքն 2½ անգամ ավելի:

Հացահատիկը թաղցվել է կալումը վնասարար կերպով կազմակերպելու միջոցով: Հազարավոր տոնն հացահատիկ թողել են հարդի ու մղեղի մեջ: Պավլովսկի ռայոնի կոլտնտեսություններում հարդի մեջ յերևան է բերված մինչև 15 տոկոս հացահատիկ:

Հացահատիկի հսկայական քանակություն վատնվել է ապորինի կերպով, ավել հացահատիկ ավանսի ձևով բաց թողնելու միջոցով: Ահա առանձին որինակներ.—Նովոմալատասիյսկայա ստանիցայի «Կրասնի-Կուբանեց» կոլտնտեսության մեջ կոլտնտեսուհի Մարիա Ցերեմիցկայան, վորին հանելիս է յեղել միմիայն 45 կիլոգրամ, կարողացել է ստանալ 220 կիլոգրամ հացահատիկ: Ստարոմինսկի ռայոնի «Զերվոննի-Ստյադ» կոլտնտեսության կոլխոզնիկ Ալեքսեյ Բելոզերը, վոր շարունակ սաբոտաժի յե յենթարկել կոլտնտեսական աշխատանքը, վատակել է ընդամենը միմիայն 9 կիլոգրամ, մինչդեռ ստացել է 37 կիլոգրամ: Կանայեվսկի ռայոնի «Ստրանա Սովետով» կոլտնտեսության դրքերում «կոլեկտիվային ծախքեր» դրաֆայում վորպես ծախս է ցույց տրված 418 ցենտներ: Ստուգումը հայտարերեց, վոր այս ամբողջ հացահատիկը կոլխոզում պարզապես բաժանված եր անհատ կոլտնտեսականների միջև ավանսներից ավելի: «Իսկրա», «Մոլոտ», «Մարքսիստ» և «Զինգարեց» (Պավլովսկի ռայոն) կոլտնտեսություններում, վորպեսզի ապրանքային հացահատիկը վորքան հնարավոր է շուտ վատնեն, սկսել են դրանով կերակրել ձիերին:

Ի վերջո, բազմաթիվ են կոլտնտեսային սեփականությունն ուղղակի կերպով, բացարձակորեն դողանալու, հափշտակելու փաստերը: Նովորաժդեստվենսկայա ստանիցայում միմիայն կուլակ Կուպինը դողացել է, ըստ մոտավոր հաշվումների, հազար փթից ավելի կոլտնտեսային հացահատիկ: Հացահատիկը դողացվում եր գրեթե բոլոր կոլտնտեսություններում: Կուլակն ագիտացիա յեր մղում հասկերը դաշտում կտրելու, խրձերը դողանալու, ամբարները կողոպտելու ոգուն:

Հանդես գալով վորպես հացամթերումները սաբոտաժի յենթարկելու գործի կազմակերպիչ, կուլակությունը Կուբանում նման դիրք եր բռնել նաև աշնանացանի վերաբերմամբ:

«Ինչո՞ւ համար եք ավելորդ ցանքս անում, ցանեք վորքան ձեզ պետք է և ուրիշ վոչինչ, մի՞թե ձեզ չեն ձանձրացրել այդ հացամթերումները»,—այսպիսի լոզունգներով եյին հանդես գալիս Կուբանի կազակության փչրանքները, փորձելով ամեն կերպ կրճատել աշնանացանը:

Ինչո՞ւ Կուբանի կուլակությանը հաջողվեց հացամթերումների և աշնանացանի սաբոտաժ կազմակերպել:

Առաջին, այն պատճառով, վոր Հյուսիսային Կովկասի կուսակցական և կոմսերվատիվ կազմակերպությունները կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման գործին ինչպես պետք է բոլորովին չեյին զբաղվել: Նրանք հաշվի չառան այն փաստը, վոր կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդումը հանդիսանում է վորպես լծակ կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակման՝ սոցիալիստական դիսցիպլինայի ստեղծման միջոցով, աշխատանքի կազմակերպման և բաշխման սոցիալիստական սկզբունքների կիրառման միջոցով: Նրանք հաշվի չառան այն բանը, վոր կոլտնտեսային աշխատանքի կազմակերպման մեջ թույլատրված մանրբուրժուական ամեն տեսակի խեղաթյուրում, ինչպիսին են «ծխային» բրիգադը, դիմաղրկությունը, հավասարեցումը և այլն,—վոչ միայն իջեցնում եյին գյուղի սոցիալիստական սեկտորի բերքը, այլև դուռ եյին բանում կուլակային ազդեցության համար կոլխոզներում, տապալում եյին կոլտնտեսային արտադրությունն ամ-

բողջությամբ, խրախուսելով լոզբերին, հանցավոր և անվայելուչ վերաբերմունքը դեպի ինվենտարն ու անասունները որևնք եյին դարձրել:

Հյուսիսային Կովկասի կազմակերպությունները չկարողացան այնպես համախմբել կոլտնտեսականներին՝ պայքարելու կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման համար, վորպեսզի կուլակային ագիտացիան արձագանգ չգտնի նրանց մեջ:

Ցերկրորդ, Հյուսիսային Կովկասի կազմակերպությունները թերագնահատեցին կառավարության դեկրետը՝ կոլտնտեսային-հասարակական սեփականության պահպանման մասին:

Հյուսիսային Կովկասի կուսակցական և կոմյերիտական բջիջները, ինչպես նաև խորհրդային վարչական որգանները (միլիցիան, դատարանը) գործնականում չեյին կենսագործում կառավարության այդ դեկրետը, և կոլտնտեսային գույքը հափշտակող գողերը մնում եյին անպատիժ:

Անպատիժ մնալով, գողերը ծաղրում եյին ադնիվ, առաջավոր կոլտնտեսականներին, հպարտանալով գողացածով: Հյուսիսային Կովկասի շատ շրջանների կուսակցական և կոմյերիտական բջիջները, չեյին հասկացել, վոր կոլտնտեսային բերքի համար մղվող պայքարը կոլտնտեսությունների վարչական-տնտեսական ամրապնդման կարևորագույն լծակն է, վոր հատկապես հասարակական սեփականության անձեռնմխելիության համար մղվող այդ պայքարում մենք պետք է սոցիալիստորեն վերադաստիարակենք կոլտնտեսականներին:

Ցերրորդ, Հյուսիսային Կովկասի կուսակցական և կոմյերիտական բջիջների խոշորագույն սխալը հանդիսանում է այն փաստը, վոր նրանք կոլտնտեսություններում դեկավար կադրերն ամրապնդելու և կոլտնտեսային ակտիվը դաստիարակելու համար լուրջ ու սիստեմատիկ աշխատանք գրեթե չեյին տարել:

Կոլտնտեսային ակտիվը դա այն քաղաքական ուժն է, վորի վրա մենք պետք է հենվենք կոլտնտեսային մասսաների մեջ կուսակցական դիծ անցկացնելու գործում: Այդ ակտիվը Հյուսիսային Կովկասում գրեթե բոլորովին մոռացված եր: Հատկապես հենց այս սխալի հետևանքով եր, վոր կոլտնտեսություններից շատերում կառավարման դեկն անցավ վոչ թե առաջավոր կոլտնտեսականների, հարվածայինների, կուսակցությանը մոտ կանգնած և կուլակի դեմ պայքարող մարդկանց ձեռքը, այլ խորթ և դասակարգայնորեն մեզ թշնամի տարրերի ձեռքը:

Այսպիսին են Հյուսիսային Կովկասի կազմակերպությունների աշխատանքի մեջ յերևան յեկած այն հիմնական սխալները, վորոնց ոգտագործումով կուլակային տականքները կարողացան կազմակերպել հացամթերումների և աշնանացանի սաբոտաժը:

Վերևում հիշված կոլտնտեսային շինարարության բոլոր խոշորագույն սխալների գլխավոր պատճառը Հյուսիսային Կովկասում հանդիսանում է Հյուսիսային Կովկասի և առանձնապես Կուբանի մի շարք շրջանների կուսակցական և կոմյերիտական բջիջների դրությունը:

Այդ ռայոնների կուսակցականներն ու կոմյերիտականները, տեսնելով կոլտնտեսային շինարարության հաջողությունները, գերագնահատեցին իրենց ուժերը, թուլացրին դասակարգային զգոնությունը, իդեալականացրին կոլտնտեսականին, կարծելով, թե նա այլևս վերադաստիարակվելու կարիք չի զգում: Նրանք թերագնահատեցին թշնամու ուժերը և ազդեցությունները:

Մի կողմից, Հյուսիսային Կովկասի մի շարք շրջանների կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունները խիստ աղտոտվել եյին կուլակային, խորթ տարրերով: Մյուս կողմից, Հյուսիսային Կովկասի գյուղի և գլխավորապես Կուբանի կոմունիստների և կոմյերիտականների մի մասն ինքը դարձել եր կուլակային ազդեցություններին գերի և դրա համար ել վոչ միայն չկարողացավ ժամանակին հայտաբերել կուլակային սաբոտաժը և անհապաղ ընկնել այն, այլև հանդիսացավ կուլակային այդ սաբոտաժի ուղեցույցը: Մի ամբողջ շարք փաստեր կան, յերբ գյուղական կոմունիստներն ու կոմյերիտականներն իրենք են թաղցրել հացահատիկը պետությունից, իրենք են գողացել հացահատիկը, իրենք են հանդես յեկել վորպես կուլակային սաբոտաժի կազմակերպիչներ, կանգնելով լիակատար վերասերման ուղու վրա, գլորվելով մինչև պրոլետարական հեղափոխությանը և բանվորա-գյուղացիական պետության շահերին բացահայտ դավաճանությունը:

Ատրադնայա ստանիցայի կոլտնտեսային բջիջի նախկին քարտուղար Կոտովի գործը, վորը գիշերային մի խորհրդակցություն եր կազմակերպել, վորտեղ գաղտնի կերպով մշակվել եր կոլտնտեսային հացահատիկը թալանելու պլանը, ցույց է տալիս, թե գյուղական կոմունիստների և կոմյերիտականների մի մասի մեջ վորչափ խորացել եր քայքայումը:

Հյուսիսային Կովկասի գյուղական շրջաններում և առաջին հերթին Կուբանի շրջաններում այժմ սկսվել է կուլակական և կոմյերիտական կազմակերպությունների՝ զտումը: Նույնպիսի

գ

ում կատարվում է նաև Ուկրաինայի առանձին շրջաններում, վերջերս հայտարարվել են Կուբանի նման փաստեր:

Կուբանի գեղջիների դասերը պիտի հաշվի առնեն կոմյերիտական բոլոր կազմակերպությունները գյուղում: Պետք է հիշել, որ կուսակցության և կոմյերիտմիության ներսում գտնվող թշնամին է՛լ ավելի վտանգավոր է, քան այն թշնամին, որը կանգնած է մեր շարքերից դուրս: Ամենավճռական և սիստեմատիկ կերպով մաքրել կոմյերիտական կազմակերպությունները կուլակի գործակալներից, կուլակային քաղաքականություն կիրառող մարդկանցից, կազմալուծված տարրերից, կոմունիզմի գործին խորթ և նրան դավաճանող մարդկանցից,—այսպիսին է կոմյերիտական բոլոր կազմակերպությունների մարտական խնդիրը գյուղում:

Կոմյերիտական յուրաքանչյուր բջիջ մենք պետք է վերածենք իսկական բայլևիկյան, մարտունակ կազմակերպության, որը կարող լինի գործնականորեն պայքարել կուսակցության գծի համար, դասակարգային թշնամուն հակահարված տալ, իր շուրջը համախմբել կոլտնտեսային յերիտասարդությանը և աշխատել կուսակցության ղեկավարության տակ ու գլխավորելով յերիտասարդությանը աշխատել կոլտնտեսությունների կազմակերպական-անտեսական ամրապնդման համար, սոցիալիստորեն վերադաստիարակելով կոլտնտեսականների մասսաներին:

V

Իսկ ի՞նչ առաջնահերթ խնդիրներ է դրել ՀԱՄԼԿՑԵՄ ԿԿ-ի վեցերորդ պլենումը կոմյերիտմիության գյուղական բջիջների առաջ ներկա մոմենտում:

Բոլոր կոմյերիտականների մասսայական-քաղաքական աշխատանքի ամենագլխավոր անհետաձգելի խնդիրը գյուղում հանդիսանում է անձնազոհ և յեռանդուն պայքարը հացամթերումների պետական պլանի շուտափույթ կատարման համար:

Հացի համար մղվող պայքարն այժմ մտել է իր ավարտման, բայց և դրա հետ մեկտեղ ամենալարվածմոմենտը:

Բոլոր հետ մնացող շրջանների կոմյերիտական բջիջները պարտավոր են հիշել, որ իրենց շրջանները դանդաղեցնում են ամբողջ Խորհրդային Միության մթերումների պետական պլանի կատարումը: Նրանք պետք է հիշեն, որ հենց իրենց շրջանների հանցանքն է, որ մինչև այժմ հացամթերումների տարեկան առաջադրանքից մոտ 30 տոկոսը դեռևս չի կատարվել: Նրանք պետք է հիշեն, որ կուսակցությունն ու պետությունը չեն կարող թույլատրել հացամթերումների ձգձգում վորոշված կայուն ժամկետից ավելի (այսինքն՝ 1933 թ. հունվարի 15-ը):

Գայքարը հացի համար—պայքար է սոցիալիզմի համար,—այսպես է ասել բազմիցս Լենինը: Կոմյերիտականներն այժմ պետք է գործադրեն իրենց բոլոր ուժերը, վորպեսզի խորտակեն դասակարգային թշնամու դավերը: Կուլակային դիմադրությունը հացամթերումների դեմ պետք է ջախջախվի: Հյուսիսային Կովկասում, ինչպես նաև ուրիշ մարզերի մի շարք առանձին ռայոններում հացամթերումների դեմ կուլակության փչրանքների կազմակերպած սաբոտաժը պետք է խորտակվի մինչև վերջը:

Կոմյերիտական բջիջները և յուրաքանչյուր կոմյերիտական գյուղում պարտավոր են յեռանդուն կերպով կռվել կուլակների հացահատիկային հորերի հայտարերման համար, կռվել կոլտնտեսային հացահատիկը պետությունից թաքցնելու փորձերի դեմ:

Պետք է ստիպել կուլակային ունևոր տնտեսություններին լրիվ կերպով հանձնելու իրենց հասանելիք հացահատիկը: Նմանապես պետք է լուրջ ուշադրություն դարձնել, որ մենատնտեսները—չքավորները և միջակները—նույնպես կատարեն հացամթերումների պլանը, որանց շրջանում ծավալելով լայն բացատրական աշխատանք:

Հացամթերումների պլաններն այս տարի իջեցված են: Այդ պլաններն անպայմանորեն իրական են: Հացի պաշարներ կան: Պաշարներ կան նաև այն շրջաններում, որոնք հացամթերումների գործում այժմ հետ են մնում—Ուկրաինա, Ներքին Վոլգա, Ուրալ, Հյուսիսային Կովկաս և ուրիշները: Սակայն այդ շրջաններից շատերում բերքի մեծ մասը մինչև այժմ չի կալսված: Արագացնել կալսումն այդ շրջաններում—նշանակում է արագացնել հացահատիկների հանձնման ընթացքը:

Իզուր չէ, որ կուլակն ու լոդրն ամբողջ ուժով աշխատում են ձգձգել հացամթերումների աշխատանքը: Կոմյերիտականները պետք է կազմակերպեն կալսման մշտական աշխատանքը, կազմակերպեն հացահատիկը ելեվատոր տանելու անընդհատ աշխատանքը, ամենաանխնա կերպով հարվածելով ամեն տեսակի գիշատիչներին, որոնք թաքնվել են հացահատիկային բնագավառում և կազմալուծում են աշխատանքային դիսցիպլինան:

Յուրաքանչյուր կոմյերիտական գյուղում պարտավոր է հիշել ՀԱՄԼԿՑԵՄ ԿԿ-ի վեցերորդ պլենումի ցուցումները այն մասին, որ յուրաքանչյուր կոմյերիտականի նվիրվածությունը մեր կուսակցության գործին, սոցիալիզմի գործին ամենից առաջ և ամե-

նից շուտ ստուգվում է հացի համար և հացամթերումներին ցույց տրված կուլակային դիմադրության դեմ մղած պայքարով:

Հացամթերումների ընթացքն արագացնելու համար մղվող պայքարում կոմյերիտականները պարտավոր են լայն կերպով բացատրել ԽՍՀՄ ԺԿԿ-ի և Համկ(բ)Կ ԿԿ-ի վերջին վորոշումը, վորով Թաթարական հանրապետությանը և Մոսկվայի մարզին թույլատրված է անարգել կերպով վաճառել հացը ժամկետից առաջ, վորովհետև նրանք հացամթերումների իրենց համար սահմանված պլանը կատարել են ժամկետից առաջ և արդեն ապահովել են իրենց դարնանացանի սերմացվով:

Այս վորոշման մեջ նախազգուշացվում է մնացած մարզերի կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին և մենատնտեսներին, վոր յեթե սրանք նույնպես կարողանան ժամկետից առաջ (մինչև 1933 թ. հունվարի 15-ը) կատարել հացամթերումների պլանը և իրենց ապահովել սերմացվով, ապա սրանց ևս կթույլատրվի հացի վաճառքը ժամկետից առաջ:

Միևնույն ժամանակ կառավարության վորոշումը նախազգուշացնում է, վոր այն մարզերում, յերկրամասերում և հանրապետություններում, վորոնք չեն կատարում հացամթերումների տարեկան պլանը և իրենց չեն ապահովում դարնանացանի սերմացվով, հացի կոլտնտեսային վաճառքը չի թույլատրվի, իսկ այդ մարզերում, յերկրներում և հանրապետություններում հացի վաճառման յուրաքանչյուր փաստը կհետապնդվի վորպես սպեկուլյացիա:

Բոլոր շրջանների կոմյերիտական բջիջները պետք է հավատարվեն առաջավորներին—Թաթարական հանրապետությանն ու Մոսկվայի մարզին, կուսակցության և կառավարության այս վորոշումն ոգտագործելով մոբիլիզացիայի յենթարկել մասսաներին հացամթերումների պլանը և գարնանացանի սերմացվի հավաքումը ժամկետից առաջ կատարելու համար:

Այն փաստը, վոր հացամթերումների պլանը կատարած և սերմացվով իրենց ապահոված կոլտնտեսությունները, կոլտնտեսականները ու մենատնտեսները անցնում են հացի խորհրդային վաճառքին, պարտավորեցնում է կոմյերիտական բջիջներին ամեն կերպ ուժեղացնել իրենց մասնակցությունը կոլտնտեսային առևտրի կազմակերպման գործում:

Նեպի առաջին շրջանից տարբեր—խորհրդային առևտուրը պետք է ծավալվի ներկայումս այնպիսի ձևերով, վորոնք դուրս են վանում բանվորների և գյուղացիների հաշվին հարստացող մասնավոր առևտրականին, սպեկուլյանտին և միջնորդ զնորդին:

Այս պատճառով էլ գյուղի կոմյերիտական բջիջները և մասնավանդ բոլոր այն կոմյերիտականները, վորոնք աշխատում են կոոպերացիայի և պետառևտրի որգաններում, շուկաներում և բազարներում, հանրային հսկողության և վերահսկողության կազմակերպություններում, պետք է հատուկ աշխուժությամբ հետևեն դասակարգային թշնամու և նրա ագենտուրայի ամեն տեսակի փորձերին՝ խեղաթյուրելու ներկա ետապի խորհրդային առևտրի հիմնական կանոնը:

Սպեկուլյանտներն ու շարչիները, ոգտվելով առևտուր անող մեր կազմակերպությունների մեջ տեղի ունեցող բացերից ու թերություններից, ոգտվելով այդ կազմակերպությունների ծանրաշարժությունից ու անտնտեսությունից, ոգտվելով անհատ կուսակցականների և կոմյերիտականների դասակարգային վոչ-բավարար աչալրջությունից, անկասկած աշխատում են ոգտագործել հացի խորհրդային առևտրի ծավալումն իրենց ոգտին, մասնավորապես աշխատում են ձախողել գների խորհրդային քաղաքականությունը, տոզել հացի սպեկուլյացիայով:

Ամեն կերպ արմատախիլ անել միջնորդ-զնորդին և սպեկուլյանտին!

Առևտրական որգանների մեջ աշխատելու համար ջոկել գործնականում ստուգված կոմյերիտականների, բարձրացնել նրանց դասակարգային զգոնությունը, ոգնել նրանց՝ տիրապետելու առևտրական գործի տեխնիկային,—սա յե յուրաքանչյուր կոմյերիտականի և վոչ կոմյերիտական բջիջի դասակարգային մարտական խնդիրը գյուղում:

ՀամլկՑԵՄ ԿԿ-ի վեցերորդ պլենումը նշել է այն գրության միանգամայն անթույլատրելիությունը, յերբ առանձին կոմյերիտականների և կոմիտեների կողմից կոոպերացիայում աշխատելու գործին հայտարարվում է սնապարծ, արհամարհական, հակարայլկոմյան վերաբերմունք: Ակտիվորեն մասնակցելով գյուղական սպառողական ընկերությունների (գյուղկոոպ) վարչությունների ներկայումս տեղի ունեցող վերընտրություններին, կոմյերիտական բջիջները գյուղական կոոպերացիայում աշխատելու համար պետք է ընտրեն իրենց ամենալավ ակտիվիստներին:

Համ Լկ՚ՑԵՄ ԿԿ-ի վեցերորդ պլենումը պարտավորեցրեց կոլտնտեսությունների կոմյերիտական բոլոր կազմակերպություններին լինել կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների գյուղատնտեսական արտադրանքի ավելցուկները կոլտնտեսական

շուկա դուրս բերելու ավելացման գործում նախաձեռնողներ և կազմակերպիչներ:

Միևնույն ժամանակ պլենումը չեշտեց, որ կոլտնտեսային առևտրի լայն ծավալումը պահանջում է պարենային լրացուցիչ միջոցների հայտաբերում կոլտնտեսության մեջ և կենսամթերքների արտադրության նոր աղբյուրների կազմակերպում: Ուստի և կոլտնտեսությունների կոմյերիտական բջիջները պետք է դառնան ճաղարաբուծության, ձկնային տնտեսության, վորսորդական արտելների, ինչպես և բանջարեղենի, մրգի, սնկի վերամշակման գործի կազմակերպման նախաձեռնողները:

Կոմյերիտական բջիջները մարտական աշխատանք պետք է ծավալեն հանրային սեփականության պաշտպանության համար մղվող պայքարի շուրջը: Հանրային սեփականությունը նվիրական է ու անձեռնմխելի:

Անխնա կերպով մաքրելով իր շարքերն այնպիսիներից, վորոնք արատավորել են կոմյերիտական կոչումը հանրային բարիքի ամոթալի գողությամբ, կոմյերիտական բջիջները պարտավոր են կոլտնտեսություններում ստեղծել այնպիսի դրություն, վոր ամենախիստ և ամենադաժան կերպով դատապարտվեն նրանք, ովքեր չեն պաշտպանում կոլտնտեսային բարիքը, ովքեր անտարբերությամբ դիտում են այդ բարիքի հափշտակությունը, ովքեր չեն պայքարում հանրային սեփականության անձեռնմխելիության համար:

Կոմյերիտականները պետք է հայտաբերեն, թե, ով և վորտեղ և գողանում հացահատիկը, անմիջապես հայտնելով այդ մասին գյուղխորհուրդներին, կոլտնտեսությունների վարչություններին, գատական-քննչական մարմիններին:

Կոմյերիտականներին վայել չէ լռել, յերբ տեսնում են գողության փաստը: Ցուրաքանչյուր կոմյերիտական պարտավոր է ուղղակի մատնանշել գողերին և սրիկաներին, համարձակորեն մերկացնել նրանց սատարողներին:

Համ ԼԿՑԵՄ ԿԿ-ի վեցերորդ պլենումը վորոշեց դեկտեմբերհունվարին անցկացնել բանվորական, կոլտնտեսային ու աշխատավոր յերիտասարդության լայն ժողովներ ու կոնֆերանսներ և «թեթև հեծելազորի» համամիութենական արշավներ, սոցիալիստական հանրային սեփականության պահպանության առթիվ: *Այդ ժողովներում պետք է բացատրել, վոր յուրաքանչյուր կոմյերիտական ու կոլտնտեսական պարտավոր են աչքի լույսի պես պահպանել կոլտնտեսային բարիքը, բացատրել, վոր գողերի և*

որիկաների թիկունքում կանգնած է կուլակը, վորը ձգտում է քայքայել կոլտնտեսությունները ներսից: Այդ ժողովներն ու կոնֆերենցիաները պետք է այնպես նախապատրաստել, վորպեսզի կոլտնտեսային յերիտասարդությունն այդ ժողովներում հանդես գա ակտիվորեն, անվախորեն մատնացույց անելով հացահատիկի հափշտակության փաստերը, անվանի մինչև հացամթերումների վերջանալը հացահատիկ վաճառողին, հափշտակողներին ու սպեկուլյանտներին, ցույց տա, թե դասակարգայնորեն խորթ տարրերից և գողերից ովքեր են խցկվել պահեստապետի, հաշվետարի, կոոպերատիվի գործակատարի տաքուկ տեղը: Անհրաժեշտ է, վոր այդ ժողովներին և կոնֆերենցիային մասնակցողները տեղն ու տեղը մտնեն «թեթև հեծելազորի» արշավի մեջ:

Գյուղում այդ արշավի խնդիրն է բանալ հացահատիկի հափշտակության դեպքերը, ստուգել սերմացվի ֆոնդի, ֆուրաժի և գյուղատնտեսական ինվենտարի պահպանությունը: *Այս աշխատանքը կազմակերպված ձևով անցկացնելու համար անհրաժեշտ է, վորպես կոլտնտեսային յերիտասարդության ժողովների հետևանք, անմիջապես խմբեր կազմել առանձին բնագավառներն ստուգելու համար: Որինակ, ֆուրաժի պահպանությունն ստուգող խմբերը կկատարեն այսպիսի աշխատանք...տնտեսավարական գրքերում նշանակված ֆուրաժի պաշարները համեմատել փաստորեն ստակ քանակության հետ. պարզել, թե գարնան գաշտային աշխատանքների ժամանակ վորքան և ի՞նչ կեր է հարկավոր անասունների համար և ապահովվա՞ծ է արդյոք ֆուրաժի այդ գարնանային ֆոնդը. գնել կերը պահելու բոլոր տեղերը և պարզել, թե վո՞րքան է ապահովված գողացվելուց և փչանալուց, ո՞վ է դրա պատասխանատուն. ստուգել, թե արդյոք այդ կերը կոլտնտեսականներն այս ու այն կողմից չե՞ն վերցնում իրենց սեփական կովերի համար. պարզել՝ ո՞վ և ի՞նչպես է կատարում բրիգադներում կերի բաշխումը—«աչքաչափո՞վ», թե քաշով, չափով, տվածը գրի առնելո՞վ, թե «հիշելով». ստուգել սիլոսային հորերի դրությունը և այլն:*

Նման մանրակրկիտ աշխատանք պետք է տանել նաև սերմֆոնդի, գյուղատնտեսական ինվենտարի և վառելանյութի պահպանության վերաբերմամբ: Այսպիսի աշխատանքին մասնակցելը կոլտնտեսային յերիտասարդության մեջ կդաստիարակի դիտակից վերաբերմունք դեպի հանրային սեփականությունը, կսովորեցնի խնայել կոլտնտեսային աշխատանքի արդյունքները: Արշավի անցկացումը պետք է դարձնել ընդհանուր-կոլտնտեսային գործ, դրա

մեջ դրավելով նաև հասակավոր կոլտնտեսականներին։ Արշավի արդյունքների, նրա հայտարարածի մասին պետք է զեկուցել կոլտնտեսային ժողովներում, քննության նյութը հանձնել համապատասխան մարմիններին, հասնել այնպիսի միջոցների, որոնք իրոք շտկում են դրությունը, լիկվիդացիայի յեն յենթարկում անկարգությունները, պատժում հանցավորներին։

Անկասկած է, որ արշավն անցկացնելիս կհայտաբերվեն դասակարգային խորթ տարրեր և գողեր պահեստապետների, հաշվետարների, տնտվարների, պահակների մեջ։ Այդպիսիներին պետք է դուրս շպրտել, դրանց փոխարեն առաջ քաշելով գործին նվիրված և գրագետ կոլտնտեսականների, որոնց թվում նաև արշավին մասնակցողներից, որոնք իրենց ցույց են տվել որպես կոլտնտեսային բարիքի արթուն պահակներ։

Կոմյերիտական բջիջները պետք է այդ արշավին մասնակցողներին կցեն «հեծելազորի» շարքերին, ստեղծեն իրենց ղեկավարության տակ աշխատող թեթև հեծելազորային մարտական մըշտական ջոկատներ, դարձնելով այդ ջոկատները սոցիալիստական հանրային սեփականության անձեռնմխելիության սրատես դիտակալ պահակներ։

Յերբ հացամթերումների և գարնանացանի սերմացվի պլանը կատարելուց հետո յուրաքանչյուր կոլտնտեսություն անցնում է յեկամուտների վերջնական բաշխմանը, կոլտնտեսային կոմյերիտական բջիջները պետք է հետևեն, որպեսզի յեկամուտների բաշխումը կատարվի ըստ աշխատանքի։ Կոլտնտեսային յեկամուտների բաշխման հետևանքով հարվածայինները պետք է ամեն կերպ խրախուսված ու վարձատրված լինեն, իսկ լողրերն ու ավարառները՝ խիստ պատժված։ Կոմյերիտական բջիջները պետք է հետևեն, որպեսզի աշխատանքի կամ աշխատանքի ընդհանուր քանակի գնահատությունը բարձրանա կամ իջնի՝ համաձայն կոլտնտեսային յուրաքանչյուր բրիգադի աշխատանքի քանակի և որակի։

Կոլտնտեսային յեկամուտների վերջնական բաշխման ժամանակն այնպիսի ժամանակ է, յերբ յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ փաստորեն հայտնի յե դառնում, թե ո՞վ է յեղել իրոք որինակելի հարվածային կոլտնտեսականը և ով՝ ծույլն ու լոդրը։

Կոմյերիտական բջիջն այդ ժամանակը պետք է ոգտագործի նրա համար, որպեսզի ստուգի իր յուրաքանչյուր կոմյերիտականի արտադրական աշխատանքի վարկը։ Սրա համար հարկավոր է կոմյերիտական բջիջի հատուկ ժողով գումարել և հերթով ամեն մի կոմյերիտական կոլտնտեսականի առջև չեչտակի հարց դնել։

— Քանի՞ աշխոր ես դու վաստակել։

Յեթե կոմյերիտականը քիչ աշխոր է վաստակել, կոմյերիտական բջիջն իրավունք ունի խիստ կերպով պահանջել նրանից հետևյալ հարցի պատասխանը՝

— Ինչո՞ւ քիչ աշխոր ունես, ինչո՞ւ յես վատ աշխատել, ինչո՞ւ գործի թունդ ժամանակ դաշտում չեյիր յերևում, ինչո՞ւ չես արդարացնում կոմյերիտականի բարձր կոչումը, ինչո՞ւ չես հանդիսանում կոլտնտեսային արտադրության առաջավորը, կոլտնտեսային դաշտերի հարվածայինը։

Յեթե այսպիսի ժողով կազմակերպվի, ապա կոմյերիտական բջիջն իրապես կկարողանա ստուգել, թե վո՛րքան բարձր է իր արտադրական դերը կոլտնտեսության մեջ, և դրա հիման վրա հետագա իր խնդիրները կոլտնտեսային հարվածային աշխատանքի, կոլտնտեսության կազմակերպական-տնտեսական ամրապնդման համար մղվող պայքարում։

Նշելով կոլտնտեսության մեջ կատարելիք իր արտադրական աշխատանքի պլանը, կոմյերիտական բջիջը պարտավոր է այժմվանից արդեն նախապատրաստվել գարնանացանի համար, ապահովել սերմացվի ֆոնդի ժամանակին հավաքելը (Հայաստանում մինչև փետրվարի 1-ը) և դառնալ սերմացուն ժամանակին տեսակավորելու գործի նախամարտիկը, որովհետև շատ բանով դրանից է կախված մոլախոտերի դեմ մղվող մեր պայքարի հաջողությունը, բերքի համար մղվող մեր պայքարի հաջողությունը։

Յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ ձմեռը պետք է դառնա ինվենտարը դաշտային աշխատանքների համար նախապատրաստելու յեռուն ժամանակը։ Այժմվանից արդեն պետք է մարտահանորեն ձեռնարկել տրակտորների վերանորոգման գործին։ Անհրաժեշտ է ապահովել հերկի ու ցանքի համար քաշող ուժի նախապատրաստումը։

Զբաղվելով այս բոլոր գործերով, կոմյերիտական յուրաքանչյուր բջիջ պարտավոր է խորաթափանց լինել կոլտնտեսության արտադրական-ֆինանսական տարեկան պլանը կազմելու գործի մեջ, հատուկ ուշադրություն դարձնելով արտադրական ուժեղ մնայուն բրիգադներ կազմելու վրա։

Գարնանացանի նախապատրաստման համար յերիտասարդու-

թյան մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու նպատակով անհրաժեշտ է այժմվանից իսկ բոլոր խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում այս հարցի առթիվ անցկացնել բջիջների և արտամիութենական ամբողջ յերիտասարդության լայն խորհրդակցություններ:

Յուրաքանչյուր բջիջի ժողովում հարկավոր է քննարկել, թե ինչպես պետք է դասավորել կոմյերիտականներին կոլտնտեսության արտադրական մնայուն բրիգադների մեջ, քննարկել, թե յուրաքանչյուր կոմյերիտական անձնապես վորտեղ պետք է աշխատի:

Մենք պետք է հասնենք այնպիսի դրության, վորպեսզի 1933 թ. գարնանը և այնուհետև ամբողջ տարվա ընթացքում յուրաքանչյուր կոլտնտեսային բջիջում կոմյերիտականների ճնշող մեծամասնությունն անմիջական կերպով աշխատի դաշտում, արտադրական մնայուն բրիգադներում, ցույց տալով հարվածային աշխատանքի որինակներ:

Այս է կոմյերիտականի այն աշխատանքների հետագա բոլոր հաջողությունների հիմնական պայմանը, վոր նա պետք է կատարի կոլխոզների տնտեսության մեջ՝ կոլտնտեսային աշխատանքի արտադրողականության բարձրացման և դաշտերի բերքատվության բարձրացման համար:

Սակայն կոմյերիտական բջիջները իրենց աշխատանքի շրջանակը չպետք է սահմանափակեն միմիայն սոցիալիստական սեկտորով. չպետք է մոռանան աշխատավոր մենատնտեսների միջավայրում կատարելիք աշխատանքի մասին:

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԿ-ի վեցերորդ պլենումն առաջարկել է գյուղական բջիջներին՝ ամենուրեք հրավիրել աշխատավոր մենատնտես յերիտասարդության փնջային ու շրջանային կոնֆերենցիաներ՝ հացամթերումների պետական առաջադրությունները կատարելու, ինչպես նաև անհատ տնտեսություններում զարգացումը նախապատրաստելու հարցերի առթիվ:

Նախապատրաստական աշխատանքը միայն այս ձևով անցկացնելու դեպքում կոմյերիտմիությունը կկարողանա կատարյալ սպառազինությամբ դիմավորել մոտակա դարձանացանը:

Կոմյերիտական բջիջների առաջ կանգնած խնդիրները նրանց ուժերին համապատասխան կլինեն միայն այն դեպքում, յեթե նրանք անկուսակցական յերիտասարդության, մանավանդ յերիտասարդ կոլտնտեսականների ակտիվի միջավայրում մասսայական-քաղաքական լայն աշխատանք ծավալեն:

Կոմյերիտմիության քաղաքական ազդեցությամբ ընդգրկել յուրաքանչյուր յերիտասարդ կոլտնտեսականի, խորհտնտեսության յուրաքանչյուր յերիտասարդ բանվորի—սա յե մեր խնդիրը:

Կոմյերիտական կազմակերպությունները գյուղում պետք է համառորեն աշխատեն ընկ. Ստալինի կողմից կոմյերիտմիությանը տված ցուցումների կատարման համար.

«Խնդիրը նրանումն է, վորպեսզի կոմյերիտմիությունը գյուղում ապահովվի գյուղացիական յերիտասարդության բազմաքանակ ակտիվով, քաղաքականորեն դաստիարակի այդ ակտիվը, դարձնի նրան պրոլետարական քաղաքականության հաղորդիչը գյուղում և վերածի նրան պրոլետարիատին գյուղացիության աշխատավոր մասսաների հետ կապող ցեմենտի»:

Անհատական խիստ ընտրության հիման վրա ընդունելով կոմյերիտմիության շարքերը կոլտնտեսական յերիտասարդության միջավայրից միմիայն ամենից լավագույն, կռվի մեջ փորձած ընկերներին, կոմյերիտական բջիջները համամիութենական կոլտնտեսային յերիտասարդությանն ավելի լայնորեն պետք է ներգրավեն կոլտնտեսությունների վարչությունների, վերստուգիչ հանձնաժողովների, կոոպերացիայի, կամավոր ընկերությունների աշխատանքի մեջ:

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԿ-ի վեցերորդ պլենումը կոմյերիտական բոլոր բջիջներին առաջարկեց իրենց շուրջն ստեղծել կամավորական խմբակներ կոմյերիտմիությանը մոտիկ կանգնած կոլտնտեսական յերիտասարդությունից, ինչպես, որինակ, կոլտնտեսությունների մեջ կատարվող հափշտակությունների դեմ կռվող խմբեր, սոցիալիստական հաշվառումը կարգավորող խմբեր, յերիտբրիգադիցների խմբակներ, յերիտասարդության կուլտուրական ժամանցի կազմակերպիչների խմբակներ և այլն: Կոմյերիտական բջիջի խնդիրն այստեղ նրանումն է, վորպեսզի ապահովի այս խմբերի վրա իր քաղաքական ազդեցությունն ու ամենորյա գործնական ղեկավարությունը, դասակարգայնորեն խորթ յերիտասարդությանը թույլ չտա մտնել այս խմբերի մեջ, քաղաքականապես վերափոխի և բջիջների աշխատանքի մեջ ներգրավի այս խմբերի մասնակիցներին, սրանցից ամենալավերին, քաղաքականապես պատրաստվածներին և ստուգվածներին ընտրելով և ներգրավելով լենինյան կոմյերիտմիության շարքերը:

Հասկանալի է, որ կոմյերիտական բջիջներն արտամիութենական յերիտասարդության միջավայրում կատարելիք իրենց մասսայական-քաղաքական աշխատանքի մեջ վոչ մի հաջողություն չեն ունենա, յեթե հենց իրենք քաղաքականապես ամուր կոփված չլինեն: Կոմյերիտականների քաղաքական զրադիտության մակարդակը բարձրացնելու համար մղվող պայքարը պետք է կանդնած լինի առաջին պլանի վրա: Վատ կլինի այն բջիջը, որը չի կարողանա ինչպես հարկն է կազմակերպել կոմյերիտականների քաղուսուցումը: Վատ կլինի այն կոմյերիտականը, որ չի ձգտի բարձրացնել իր քաղաքական մակարդակը:

Գյուղական յուրաքանչյուր կոմյերիտական իր քաղաքական զարդացումը բարձրացնելու համար պարտավոր է ամենաուշադիր և կանոնավոր կերպով կարդալ լրագրերը, ժուրնալները և քաղաքական ընթացիկ գրականությունը: Քաղաքական մարտական գրքույկները հասցնել յուրաքանչյուր կոմյերիտականի—սա է մեր կոմյերիտական կազմակերպությունների խնդիրը:

Ցուրաքանչյուր կոմյերիտական լավ ագիտատոր-մասսավիկ պետք է դառնա: Կոմյերիտական բջիջները խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում ագիտացիոն լայն աշխատանքը պետք է ծավալեն կազմակերպելով հավաքներ, թռուցիկ միտինգներ, քաղորեր, հարց ու պատասխանի յերեկոներ, զրույցներ կարմիր անկյուններում, խորհտնտեսությունների բանվորների հանրակացարանում, խրճիթ-ընթերցարանում, չայխանաներում և զրուցավայրերում (ոդաներ): Այս բոլոր կետերին պետք է կցել կոմյերիտական ագիտատորներ, զրուցողներ և ընթերցողներ: Անհրաժեշտ է կազմակերպել կոմյերիտականների նախաձեռնող խմբեր, վորոնք իրենց վրա վերցնեն հանրակացարանների, զրուցավայրերի կուլտուր-քաղաքական սպասարկումը: Այդ բոլոր տեղերում անհրաժեշտ է կազմակերպել աշխատանք լրագրի շուրջը: Հարկավոր է կազմակերպել լրագրերի բարձրաձայն ընթերցումներ, հայտարարելով՝ թե վորտեղ և յերբ պետք է տեղի ունենա ընթերցումը, լրագրերը պատից կախելով, լրագրերում առաջադրված հարցերի շուրջը զրույցներ անցկացնելով:

Մենք ավարտեցինք առաջին հնգամյակը և մտանք յերկրորդը: Կոմյերիտական բջիջներն այս հարցի շուրջը դյուղում, յերիտասարդության շրջանում մասսայական-քաղաքական լայն աշխատանք պետք է ծավալեն: Բջիջները յերիտասարդ կոլտնտեսականներին պետք է մանրամասն պատմեն առաջին հնգամյակի արդյունքների մասին և այն խնդիրների մասին, վոր դրել է կուսակցությունը յերկրորդ հնգամյակի համար:

Ցուրաքանչյուր յերիտասարդ կոլտնտեսականի առջև բջիջները պետք է նկարագրեն սոցիալիստական շինարարության հզոր ընթացքի լայն պատկերը մեր յերկրում: Պրոպագանդիստական այս աշխատանքով մենք պետք է կոլտնտեսային յերիտասարդությանը մոբիլիզացիայի յենթարկենք յերկրորդ հնգամյակի առաջին տարվա-պլանը յեռանդուն կերպով կատարելու համար:

Այժմվանից իսկ արդեն հարկավոր կլինի այս ամբողջ ագիտացիոն աշխատանքի մեջ նախապատրաստվել այդ աշխատանքը դաշտ փոխադրելու համար, վորպեսզի գարնանացանի ժամանակ մեր ագիտատոր-մասսավիկները թե՛ հարվածային աշխատանքի մեջ ցուցաբերած իրենց անձնական որինակով և թե՛ բայլևիկյան մարտական խոսքով պայքարեն տեմպերի համար, բոլոր կոլտնտեսականների հարվածային աշխատանքի համար:

Հարվածային աշխատանքը վոչ կոլտնտեսության, վոչ էլ միայն մեր յերկրի ներքին գործն է: Այդ մի գործ է, վորին հետաքրքրությամբ են նայում կապիտալիստական ամբողջ աշխարհի ճնշված ժողովուրդները, կապիտալիզմի ամենադաժան շահագործման մեջ գտնվող բանվորները ու աշխատավոր գյուղացիները, վորտեղ նրանք տնքում են տնտեսական ճգնաժամի ամենածանր հարվածների տակ: Մեր հարվածային աշխատանքը պրոլետարական ինտերնացիոնալ գործ է: Սոցիալիզմի շինարարության համար հարվածային աշխատանքի մեջ ձեռք բերած մեր հաջողություններն արիություն և վստահություն են ներշնչում իմպերիալիզմի դեմ մարտնչողների միջազգային բանակի շարքերին, կոչ են անում նրանց՝ պրոլետարական հաղթական հեղափոխություն կատարելու: Այդ պատճառով էլ ագիտատոր-կոմյերիտականները պետք է ամենուրեք ընդգծեն կոլտնտեսություններն ամրապնդելու մեր աշխատանքի միջազգային նշանակությունը: Միաժամանակ պետք է բոլոր միջոցներով ուժեղացնել խորհտնտեսային և կոլտնտեսային յերիտասարդության ռազմական պատրաստությունը, վորովհետև մեր շինարարության հաջողությունները կատաղի զայրույթ են պատճառում ամբողջ աշխարհի կապիտալիստներին, վորոնք համառորեն պատերազմի յեն պատրաստվում ԽՍՀՄ դեմ:

Պետք է ծավալել ռազմա-քաղաքական մասսայական պրոպագանդ, կազմակերպել ամեն տեսակի ռազմա-տեխնիկական ու հրաձգային խմբակներ և մանավանդ ավիատեխնիկայի ուսումնասիրության խմբակներ, հարկավոր է լայնորեն կիրառել ռազմա-

ֆիզկուլտուրային յելույթներ դեպի դաշտ, ռազմարշավներ, արտելք, հրաձգային մրցակցություններ, պատմել սրանց արդյունքները, վորպեսզի յուրաքանչյուր խորհտնտեսություն և կոլտնտեսություն ճանաչի ամենալավ հրաձգին, նրանից օրինակ առնի, նրան մեծարի:

Պլենումը կոմյերիտական բոլոր կազմակերպություններին պարտավորեցրել է ակտիվ մասնակցություն ցույց տալ ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջների վերընտրություններին, ամրապնդելով նրանց կոմյերիտմիության ակտիվով, և ՊԱԶԸ-Ավիաքիմի ռազմական ուսուցման պունկտերում կոմյերիտականների ու յերիտասարդության մեջ քաղաքական-դաստիարակչական աշխատանք ծավալել:

Կոմյերիտական բջիջը չպետք է մոռանա կոլտնտեսային յերիտասարդության կուլտուրական հանգստի և զվարճության կազմակերպման մասին ևս: Ֆիզկուլտուրա, ռադիո, կինո, դրամխմբակներ, յերգեցիկ խմբակներ, տուրիզմ, ինքնագործունեության յերեկոներ—այս ամենը պետք է լինի յուրաքանչյուր բջիջի աշխատանքի ձևերի և մեթոդների զինապահեստում, այս ամենը պետք է յենթարկված լինի կոլտնտեսային յերիտասարդության սոցիալիստական դաստիարակության խնդիրներին:

VI

Վորպեսզի կոմյերիտական բջիջը գյուղում լինի համամիութենական աշխատավոր յերիտասարդության իսկական առաջնորդը, կուսակցության ամենալավ և առաջին ոգնականը, մենք պետք է նրան դարձնենք ամուր, կազմակերպված, դիսցիպլինար և դասակարգայնորեն մարտունակ միջուկ:

Սրա համար պահանջվում է թարմացնել և ուժեղացնել բջիջի ներմիութենական կյանքը, կոմյերիտականներին իրար միաձուլել, յուրաքանչյուր կոմյերիտականի լծել բջիջային աշխատանքին, միութենական որը, կոմյերիտական ժողովում քննություն առնել, թե յուրաքանչյուր կոմյերիտական ինչպես է աշխատում, թե բջիջն ամբողջությամբ առած ինչպես է կատարում իր պլանը:

Հարկավոր է, վոր կոմյերիտականը բջիջ գնա իր բոլոր կասկածներով, հարցերով և վոր նա բջիջից ստանա ճիշտ, հասկանալի պատասխան, ընկերական ոգնություն և հաստատուն ղեկավարություն:

Բջիջն իր գործունեությունը պիտի դնի այնպես, վորպեսզի ամենորյա ուղղություն տա, ակտիվացնի յուրաքանչյուր կոմյերիտականի՝ կոլտնտեսության արտադրության մեջ կատարած գործում, նրա հասարակական աշխատանքում, նրա կրթության ընթացքում, նրա կոմունիստական դաստիարակության ասպարեզում:

Այս ամենը կարելի է ձեռք բերել միայն այն ժամանակ, յերբ բջիջի գլուխ կանգնած կլինեն ամուր, դասակարգայնորեն կռիվված ղեկավարներ: Գյուղի կոմյերիտմիության ղեկավար կադրերի կազմից, աշխատանքի վորակից, պատրաստվածությունից և կախված խորհտնտեսային և կոլտնտեսային կոմյերիտական բջիջների վողջ գործունեությունը: Հենց այդ պատճառով ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ի վեցերորդ պլենումում հատուկ ղեկուցում եր դրված գյուղի կոմյերիտմիության ղեկավար կադրերի պատրաստման և վերապատրաստման մասին:

Մեր ապրած ժամանակի առանձնահատկությունները, յերբ մենք պարտավոր ենք տասնապատկել մեր աշխատանքը կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման համար, յերբ մենք պետք է տասնապատկենք մեր ջանքերը՝ կոլտնտեսային մասսաների մեջ յեղած կուլակային ազդեցություններն ու մանր-սեփականատիրական սովորություններն արմատախիլ անելու,—գյուղի կոմյերիտական ղեկավար կադրերին առաջադրում են բարձր, բայց միանգամայն պարտադիր, անհետաձգելի պահանջներ:

Կոմյերիտմիության գյուղական ղեկավար կադրերը, խորհտնտեսությունների, ՄՏԿ-ների, կոլտնտեսությունների բջիջների քարտուղարները մեծ դեր են խաղում վոչ միայն կոմյերիտականների և յերիտասարդության դաստիարակման գործում, այլև կոլտնտեսային կյանքի քաղաքական, ինչպես նաև տնտեսական ղեկավարման գործում, մանավանդ այնտեղ, վորտեղ կուսակցական բջիջներ չկան, վորտեղ հետևապես կոմյերիտական բջիջները հանդիսանում են մեր կուսակցության գծի կենսագործողը կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման գործում:

Ներկայումս ինչպիսի ակտիվ է պահանջվում կոմյերիտմիության համար գյուղում: Բջիջն ո՞ւմ պետք է վստահի իր աշխատանքի ղեկավարությունը:

Մեզ անհրաժեշտ է ամենից առաջ այնպիսի ակտիվ կադր, վոր «բայշևիկորեն կռիվված լինի կոլտնտեսության սոցիալիստական եյության համար մղած պայքարում, կուլակային ազդեցությունների դեմ մղած կռվում»: Կոմյերիտական ակտիվի նվիրվածությունը կոլտնտեսային գործին ստուգվում է վոչ թե խոսքե-

բով ու թղթերով, այլ գործով, արտադրական բրիգադների մեջ տարած հարվածային աշխատանքով, մթերումների պլանի կատարումով, կոլտնտեսությունը պրոլետարական պետությանը հակադրելու փորձեր կատարող կուլակության դեմ մղած պայքարով:

Այնուհետև մեզ պետք են ակտիվի *կադրեր, վորոնք* կոլտնտեսային *արտադրությանը հմուտ լինեն, կոլտնտեսությունների* կազմակերպական-տնտեսական *ամրապնդման առաջնորդներ լինեն: Քիչ է, յեթե ակտիվը միայն ինքն է հարվածային: Կոլխոզում կոմյերիտական ակտիվը պետք է կարողանա կազմակերպել և մոբիլիզացիայի յենթարկել բոլոր կոլտնտեսականներին, աշխատանքի բարձր արտադրականություն ստեղծելու համար:*

Վերջապես մեզ անհրաժեշտ է կոմյերիտական և կոլխոզային յերիտասարդության հետ ամուր կապված ակտիվ: Այնտեղ, վորտեղ դոյություն չունի ակտիվի ամենորյա կապ մասսաների հետ, այնտեղ ապարեղն աղատ է կուլակային ագիտացիայի համար, այնտեղ թողնված է ճեղք, վորով դասակարգային թշնամին դեպի յերիտասարդությունը կմեկնի ազդեցության շոշափուկները: Այնտեղ, վորտեղ դոյություն ունի ակտիվի կորվածություն մասսաներից, այնտեղ հող է ստեղծվում ակտիվի դասակարգային հոտառության և աչալրջության բթացման, նրա բյուրոկրատացման և ոպորտունիստական քայքայման համար: Գյուղում մեզ պետք է այնպիսի ակտիվ, վորը գտնվի կոլտնտեսային արտադրության խորքում, կոլտնտեսականների մասսաների հետ, թիկունք թիկունքի տված աշխատի, իմանա կոլտնտեսային յերիտասարդության խոհերն ու տրամադրությունները և այդ յերիտասարդությանը տանի իր հետևից, կուսակցության ու կոմյերիտմիության հետևից իր աճնական որինակի, բայլշևիկյան համոզվածության շնորհիվ:

Այժմ գյուղում կոմյերիտմիությանն այսպիսի ակտիվ է հարկավոր: Ստեղծել, այսինքն ընտրել և դաստիարակել այսպիսի ակտիվ — լենինյան ամբողջ կոմյերիտմիության պատվի գործն է:

Յեթե բջիջները չկարողանան կատարել այս գործը, չկարողանան իրենց աշխատանքը գլխավորել այսպիսի ընկերներով, ապա նրանք ամենամոտ ժամանակում կարող են կանգնել իրենց անզորության փաստի առաջ, այն խնդիրներն իրագործելու իրենց անընդունակության փաստի առաջ, վորպիսիներն առաջադրված են գյուղի կոմյերիտմիությանը կուսակցության և Միության կողմից:

Վո՞րտեղից գտնել այդպիսի ակտիվ:

Հեռուն փնտռելու կարիք չկա: Այդպիսի ակտիվ կա հենց իրենց՝ կոլտնտեսային բջիջների մեջ: Կոլտնտեսային շարժման մասսայական զարգացման յերեք տարվա ընթացքում մեր կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում և ՄՏԿ-ներում աճեցին և կոփվեցին կոլտնտեսային արտադրության կոմյերիտական-առաջավորների, ամենալավ հարվածայինների շատ առանձնյակ հաղարներ:

Հատկապես նրանց—անմիջականորեն բրիգադներում աշխատող այդ կոմյերիտականներին, կոլտնտեսային արտադրության այդ հարվածայիններին—պետք է դնել կոմյերիտմիության կոլտնտեսային դեկի մոտ:

Կոլտնտեսային բջիջների քարտուղարների և բյուրոյի անդամների մեջ առայժմ ամենից շատը կոոպերատորներն են, ուսուցիչները, խրճիթվարները, գյուղխորհուրդների քարտուղարները, փոստի ծառայողները, գործավարները:

Մոսկվայի մարզի 33 ռայոնի կոլտնտեսային բջիջների 860 քարտուղարից 365-ը կոլտնտեսային արտադրության մեջ չեն աշխատում: ՀԱՄԼԿՅԵՄ ԿԿ-ի վեցերորդ պլենումում ընկ. Անդրեյեվի զեկուցման մեջ նման թվեր բավականաչափ բերված եր:

Այս բանը տեղի յե ունենում այն պատճառով, վոր բջիջներում այն կարծիքն է տիրում, թե՝

«... Մանկավարժը կամ խրճիթվարն այդ աշխատանքը ավելի լավ կարող են կատարել, նրանք զարգացած մարդիկ են, նրանք կարող են սովորեցնել մեզ, նրանց գործն ել հենց այդ է»:

Այս դատողությունն արմատապես սխալ է: Իհարկե, խորհրդային մեր նոր ինտելիգենցիայի կոմյերիտականներին գյուղում ամեն կերպ պետք է ոգտագործել կոլտնտեսային բջիջների աշխատանքի մեջ, մանավանդ՝ վորպես պրոպագանդիստներ, կուլտուրնիկներ և այլն: Սակայն բջիջները գլխավորելու համար մեզ անհրաժեշտ են արտադրական *աշխատանքի կազմակերպիչներ, վորոնք* կապված *լինեն կոլտնտեսականների մասսաների հետ և կռվված լինեն կուլակի դեմ ու հարվածային աշխատանքի համար մղվող պայքարում: Առաջին պլանի վրա պիտի լինի արտադրության մեջ աշխատող* կոմյերիտական-հարվածայինը, *վորը ցույց է տվել իրեն վորպես տեմպերի ուղեցույց, վորպես յերիտասարդական մասսաների ուղեցույց:*

Ամենևին պատահական չե այն փաստը, վոր այնտեղ, վորտեղ բջիջի գլուխ են կանգնած ծառայող կոմյերիտականներ, այնտեղ

բջիջը շատ քիչ է նմանվում առաջավոր արտադրողների միջուկի, այնտեղ բջիջը շատ չնչին չափով է իրեն ցուցաբերում կոլտնտեսային արտադրության կազմակերպման գործում:

Շատ հաճախ է պատահում, որ արտադրող-կոմյերիտականներից որպես բջիջի քարտուղար առաջ քաշվածներին ձգտում են չուտով «նշանակել» վճարովի աշխատանքի, «զուգավորության կարգով» տեղավորելով նրան խրճիթվարի, գործավարի և նման այլ պաշտոնով: Այս ճիշտ չէ: Չե՞ որ բջիջների քարտուղարներին արտադրությունից աղատելը և նրանց հասարակական կոմյերիտական աշխատանքը վճարովի դարձնելը կտրում է այդպիսիներին կոլտնտեսության արտադրական անմիջական կյանքից, նպաստում է մասսաներից կտրվելուն: Բջիջների այս ծառայող քարտուղարները չեն հաճախում բրիգադները և չեն ճանաչում շարքային կոմյերիտականներին, կտրված են արտադրության մեջ աշխատող կոմյերիտականներից, իսկ հաճախ նաև կենցաղից:

Ցեկ վերջապես ուղղակի խայտառակություն են այն բազմաթիվ փաստերը, երբ կոլտնտեսային բջիջների քարտուղարները աշխորեր են ստանում, առանց կոլտնտեսային արտադրության մեջ մասնակցություն ունենալու, դառնում են հացկատակներ, և այդպիսով մասնակցում կոլտնտեսային աշխորերը վոչ-արտադրական կարիքների վրա վատնելու, վերադիր ծախսերը աննորմալ կերպով ուռճացնելու մեջ:

Ցլենումն առաջարկեց անհապաղ վերացնել այնպիսի դրությունը, երբ քարտուղարների և բջիջների բյուրոների ու շրջկոմների անդամների կազմի մեջ բոլորովին աննշան և խորհրդատվություններում, կոլտնտեսություններում և ՄՏԿ-ներում անմիջականորեն արտադրական աշխատանք կատարող կոմյերիտականների տոկոսը:

Ցլենումը մատնանշեց, որ բջիջների քարտուղարներին վարձատրելուն անմիջապես պետք է վերջ տալ: Այսպիսի խեղաթյուրման համար պետք է պատասխանատվության կանչել: Մենք պետք է ձգտենք, որպեսզի կոլտնտեսային բջիջների քարտուղարները, որպես ընդհանուր կանոն, մյուս բոլոր կոմյերիտականների հետ միասին աշխատեն կոլտնտեսային արտադրության մեջ:

Շատ հաճախ բջիջները վախենում են իրենք ակտիվ առաջ քաշել և խնդրում են, որ իրենց համար քարտուղար ուղարկվի: Իրենց առաջավոր հարվածայինների առաջքաշման գործում բջիջներն ավելի համարձակ պետք է լինեն, իսկ շրջկոմները չպետք է ի չարը գործ դնեն տեղափոխությունները: Միմիայն տեղափոխությունների վրա հույս դնելը միութենական դեմոկրատիայի այնպիսի ամենավնասակար խախտում է առաջացնում, որպիսին բջիջների և շրջկոմների քարտուղարների ընտրովիությունը նշանակովիությամբ փոխարինելը: Այս յերևույթի հեղինակ հանցավորներին պետք է խիստ պատասխանատվության յենթարկել:

Չե՞ որ նշանակովիությունն ի չարը գործադրելով, ըստ եությունի շրջկոմները բջիջի վրայից վերցնում են պատասխանատվությունն այն մարդի վերաբերմամբ, որը կանգնած է բջիջի գլուխ: Իսկ մեզ անհրաժեշտ է դաստիարակել յուրաքանչյուր կոմյերիտականի վոչ միայն իր բջիջի դրության համար, այլև իր ղեկավարության համար պատասխանատու լինելու վոգով, այդ ղեկավարությունն անխնա քննադատելու և նրա թերությունները չտկելու վոգով, դասակարգայնորեն խորթ բոլոր յերևույթների դեմ,—որտեղից էլ որ այդպիսիները ծագելիս լինեն,—վճռական պայքար մղելու վոգով:

Իր ղեկավարների ընտրության ու աշխատանքի համար բջիջն է պատասխանատու: Նա պետք է լավ ճանաչի ու խստորեն ստուգի նրան, որին նա վստահել է իր աշխատանքի ղեկավարությունը:

Մինչև դարձանացանը գյուղական կազմակերպություններում կատարվելու յեն բջիջների բյուրոների վերընտրություններ: Յուրաքանչյուր բջիջ պետք է լսի իր ընտրած բյուրոյի հաշվետվությունը, բայլևիկյան ինքնաքննադատությամբ քննարկի իր աշխատանքի արդյունքները և ընտրի նոր բյուրո ու քարտուղար, ցուցումներ տալով հետագա աշխատանքի մասին, ամենից առաջ՝ դարձանացանի կատարման վերաբերմամբ: Բջիջների բյուրոների վերընտրությունը քաղաքական լուրջ գործ է: Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է մասնակցի հաշվետու-վերընտրական ժողովին: Բյուրոյի (և քարտուղարի) աշխատանքը պետք է գնահատել այն տեսակետից, թե ինչպես է նա կազմակերպել կոմյերիտականներին կոլտնտեսության արտադրության մեջ հարվածային աշխատանք կատարելու, կոլտնտեսության կազմակերպական-տնտեսական ամրապնդման աշխատանքի, հացամթերումների, աշնանացանի և տնտեսական-քաղաքական այլ կամպանիաների պլանները կատարելու համար:

Ղեկավարությունից պետք է հեռացնել այն ակտիվներին, որոնք մարտականորեն չեն կազմակերպել կոլտնտեսականների մասնակցությունը կոլտնտեսությունների ամրապնդման համար մղվող դասակարգային պայքարում, որոնք հիվանդ են ոպոր-

տնտեսական ինքնահանդստացմամբ, վորոնք դասակարգային թշնամուն և նրա կազմակերպիչ աշխատանքը «չեն նկատում», քաղաքականապես տատանվում են և գլուխը կորցնում դասակարգային սրված պայքարի պայմաններում:

Պետք է ղեկավարությունից և կոմյերիտմիության շարքերից դուրս վռնդել այնտեղ խցկված դասակարգայնորեն խորթ մարդկանց, այն ակտիվիստներին, վորոնք մասնակցել են հացամթերումներին ընդդիմադրություն ցույց տալու, հացահատիկը թաղցնելու և գողանալու մեջ, սարոտաժի յեն յենթարկել կուսակցության հրահանգները և կատարել են կուլակի հրահանգները:

Ղեկավարությունը պետք է հանձնել այնպիսի կոմյերիտականների, վորոնք անձնազոհ կերպով նվիրված են մեր կուսակցությանը, կոլտնտեսային յերիտասարդության իսկական առաջնորդներն են, կոլտնտեսային արտադրության հարվածայինները, վորոնք սատուզված են կուլակի, սրիկայի, լոդրի և ոպորտունիստների դեմ մղվող պայքարում:

Հանրահայտ է, վոր կոմյերիտմիության գյուղական բջիջների ղեկավարների պատրաստականությունը չափազանց ցածր մակարդակի վրա-յե կանգնած: Մեր գյուղակտիվն իր մեծամասնությամբ քաղաքականապես կիսագրագետ է: Կոմյերիտական ակտիվիստներից շատ-շատերը գյուղում կուսակցական ու կոմյերիտական ընթացիկ հրահանգներին շատ քիչ են ծանոթ: Որինակ, Դնեպրոպետրովսկի մարզի Սրեխովսկի շրջանում հայտարերված է, վոր կոլտնտեսային բջիջների 36 քարտուղարից 15-ը բացարձակորեն չգիտեն, թե կոլտնտեսություններում աշխատանքը կազմակերպելու մասին կուսակցությունն ինչ ցուցումներ է տվել: Մեր գյուղական ակտիվը ագրոտեխնիկական գիտելիքներով ծայր աստիճանի վատ է զինված: Գրքերի ու լրագրերի ընթերցանությամբ մեր ակտիվը միանգամայն քիչ է զբաղվում: Գյուղի կոմյերիտական ակտիվի այս անպատրաստականությունը խանգարում է նրան դառնալու առաջնորդող լուրջ կազմակերպչական ուժ կոլտնտեսային-խորհտնտեսային արտադրության մեջ, կոմյերիտականների և յերիտասարդության մասսաների ղեկավարման գործում, կուլակային աղդեցությունների դեմ մղվող պայքարում:

ՀԱՄԼԿԳԵՄ ԿԿ-ի վեցերորդ պլենումը վորոշել է՝ առաջիկա ձմռան ընթացքում խորհտնտեսային-կոլտնտեսային բջիջների բոլոր քարտուղարներին, ինչպես նաև շրջկոմների քարտուղարներին, ընդգրկել նախապատրաստման և վերապատրաստման հատուկ դասընթացների մեջ: Այս գործի վրա մինչև այժմ անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել: Որինակ, Դնեպրոպետրովսկի մարզում նախատեսվում եր դասընթացներ անցկացնել բոլոր 46 շրջաններում: Այս բանի համար դրամ է տրված: Սակայն դասընթացներ տեղի ունեցան միմիայն 14 շրջանում, ըստ վորում 200 մարդու փոխարեն դասընթացներին յեկան 50—100 մարդ: Առաջիկա ձմռանը դասընթացների կոմպլեկտացման ու անցկացման գործը պետք է ամենախիստ հսկողության տակ առնվի: Պետք է պատասխանատվության կանչել այն կոմիտեներին, վորոնք գյուղական կադրերի պատրաստման ու վերապատրաստման այս բնագավառին անփույթ վերաբերմունք են ցույց տալիս:

Բայց դասընթացներում մի-յերկու ամսվա ուսուցմամբ պատրաստման ու վերապատրաստման հարցը դեռևս չի լուծվում: Անհրաժեշտ է կազմակերպել գյուղակտիվի ամենորյա, մշտական ուսուցում:

Ինչո՞ւ յուրաքանչյուր խոշոր կոլտնտեսության ու խորհտնտեսության մեջ բջիջների քարտուղարներից ու բյուրոների անդամներից, խմբակային կազմակերպիչներից, կոմյերիտականներից, բրիգադիրներից, զանազան կազմակերպությունների մեջ ընտրվածներից ակտիվի մշտական սեմինարներ չստեղծել: Ինչո՞ւ ակտիվի այդպիսի սեմինարներ չստեղծել հենակետային խորհտնտեսություններին ու կոլտնտեսություններին առընթեր՝ մոտակա մանր բջիջների ակտիվի համար:

Ինչո՞ւ չի կարելի կարգավորել պրոպագանդիստական-հրահանգչական մշտական խորհրդակցությունների (ամիսը մեկ անդամ) սիստեմ՝ բջջային ակտիվի համար շրջանային մասշտաբով:

Կարելի՛ յե:

Առաջին հերթին պետք է հասնել այն բանին, վոր գյուղակտիվը կանոնավոր կերպով կարդա կուսակցական-կոմյերիտական ընթացիկ գրականությունը: «Молодая Гвардия» հրատարակչության զեկուցման առթիվ վեցերորդ պլենումը հատուկ վորոշում կայացրեց այն մասին, վորպեսզի կարգի բերվի ակտիվին կանոնավոր կերպով գրականություն մատակարարելու գործը:

Կոլտնտեսային արտադրության ամենալավ առաջավորներից գյուղակտիվ ընտրելով, կազմակերպելով նրա սիստեմատիկ ուսուցումը, միևնույն ժամանակ մենք պետք է ամեն կերպ բարելավենք միության ղեկավար կադրերի՝ գյուղում տանելիք աշխատանքի ամենորյա ղեկավարությունը:

Ամենից առաջ այստեղ պահանջվում է ճանաչել այն մարդկանց, վորոնց ղեկավարում ես: Իսկ մինչև այժմ շրջկոմներից շատերը չեն կարող պարծենալ նրանով, վոր ճանաչում են իրենց բջիջների քարտուղարներին: Նույնիսկ այն դեպքում, յերբ խոսք է լինում խորհտնտեսային խոշոր բջիջների քարտուղարների մասին, բանից դուրս է գալիս, վոր մարզկոմների աշխատողները չգիտեն այդ բջիջների կազմը: Որինակ, Կենտրոնական-Սևահողային մարզում 79 խորհտնտեսություն կա: Բայց վոչ կազմբաժինը և վոչ էլ մարզկոմի քարտուղարներից վորևե մեկը չկարոցան ասել, թե ինչ են ներկայացնում իրենցից խորհտնտեսային բջիջների այդ քարտուղարները, վորտեղից են աշխատանքի վերցվել, ինչ պատրաստություն ունեն: Ստուգումից պարզվեց, վոր 20 քարտուղարից 10-ը չգիտեին, թե վորքան է իրենց խորհտնտեսության ցանքի տարածությունը, 12-ը չասացին, թե վորքան է իրենց սովխոզի ճակնդեղի կորուստը: Պարզվեց նույնպես, վոր միայն 2 խորհտնտեսության քարտուղար են տեղական աշխատողներ, իսկ մնացած բոլորն ուղարկված են վերից:

Ճանաչել մարդկանց, ուսումնասիրել քարտուղար առաջքաշված ամեն մի աշխատողի—այս առաջին պահանջն է:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բջիջային ակտիվին տրվող հրահանգների վորակի բարելավման վրա: Խորհրդակցություններ, հաշվետու զեկուցումներ և այլն հրավիրելու գործում մեզնում խիստ շատ ֆորմալիզմ կա: Ստորին աշխատողներին հաշվետվության կանչելու դեպքում մեզնում հաճախ հեռևում են պաշտոնական նիստերում տրվող միայն տասրոպեանոց զեկուցումները: Իսկ ինչո՞ւ չպիտի ստորին աշխատավորի յուրաքանչյուր գալուն հետևի մարզկոմներում կամ շրջկոմներում աշխատողների նիստերից դուրս տեղի ունեցող մանրամասն զրույցը միութենական աշխատանքի պրակտիկայի հարցերի մասին:

Առանձնապես կան տեղեր, վորտեղ միութենական մասսաների ուշադրությունը հերթական խնդիրների շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու գլխավոր միջոցը հանդիսանում է աշխատողներին աշխատանքից հանելը, հանդիմանությունների վորոշումներ կայացնելը և այլն առանց այդ առթիվ վորևե հիմք ունենալու: Շատ հաճախ այդ վորոշումները կայացվում են հանդիմանվողների բացակայությամբ: Արևմտյան Սիբիրի Կամենսկի շրջանում մի անգամ լսել են կոլտնտեսային բջիջների 13 քարտուղարների զեկուցումներ և բոլորին էլ հանդիմանություն են արել:

Այս ձևի վարչարարությունն անհրաժեշտ է միանգամայն ար-

մատախիլ անել միութենական աշխատանքի պրակտիկայից: Շրջկոմները պետք է ուսումնասիրեն յուրաքանչյուր բջիջի աշխատանքը, ուսումնասիրեն կոլտնտեսային բջիջի յուրաքանչյուր քարտուղարին, գործնականում ողնեն նրան աշխատանքի մեջ:

Շրջկոմներից շատ-շատերն իրենց աշխատանքում ի չարն են գործ դնում ամեն տեսակի լիազորներ ուղարկելու գործը՝ առանց մանրակրկիտ կերպով ստուգելու այդ լիազորների վորակն ու պատրաստականությունը: Շատ հաճախ այդ լիազորները, գալով բջիջ, օրան վոչ մի ոգուտ չեն տալիս, սահմանափակվելով միայն տեղեկություններ հավաքելով: Մի շարք դեպքերում լիազորների աշխատանքը հսկողության տակ բոլորովին չի առնվում: Գործուղումից վերադառնալով, նրանք վոչ վոքի հաշիվ չեն տալիս տեղերում կատարած իրենց աշխատանքի մասին: Ուղղակի պետք է ասել, վոր յուրաքանչյուր լիազորի գլխավոր աշխատանքը պետք է համարել այն ժամանակ կազմակերպությանը տրված պրակտիկ ողնությունը, վորտեղ նա ուղարկված է, ամենևին չթույլատրելով նրանց հրամաններ արձակելու ու վարչարարության դեպքերը: Սա յե պլենումի վորոշման եությունը՝ կոմյերիմիության գյուղական ղեկավար կադրերի մասին: Կոմյերիմիության գյուղական կազմակերպությունների աշխատանքը արմատապես բարելավելու համար անհրաժեշտ է վճռականորեն ուժեղացնել այդ պրոլետարական ղեկավարությունը: Պետք է կոլտնտեսային բջիջներն ուղարկել ամենալավ կոմյերիտականներ—արդյունաբերական ձեռնարկությունների բանվորներ, խորհտնտեսությունների բանվորներ: Պետք է այդպիսի ընկերների խիստ ընտրություն կատարել, կոլտնտեսային բջիջներին աջակցելու համար ուղարկելով մեր կուսակցության գործին նվիրված ենտուզիաստներ: Հարկավոր է անարդանքի օյուղին դամել այնպիսի դասալիքներին, ինչպիսին է վոմն Լարինը, վորը Մասկվայից մոբիլիզացիայի յենթարկված յեղել Կուբան՝ վորպես շրջկոմի քարտուղար աշխատելու և փախել է իր պոստից, վորի համար ՀԱՄԼԿԵՄ ԿԿ-ն դուրս շպրտեց նրան կոմյերիմիությունից:

Ներկայումս պահանջվում է, վորպեսզի պրոլետարական կենտրոնների կոմյերիտականը ոգնության գա Միության գյուղական կազմակերպություններին:

Կոմյերիմիության քաղաքային կազմակերպություններից շատ-շատերը այժմ մոռացել են իրենց պարտականությունները հանդեպ գյուղի, թուլացրել են իրենց կապը գյուղի հետ, կտրվել են գյուղից, ըստ յերևույթին յենթադրելով, վոր կոլտնտեսու-

թյունների ստեղծմամբ գյուղի պրոլետարական ղեկավարության անհրաժեշտությունը վերանում է:

Այսպիսի դրության պետք է վերջ տալ: Քաղաքային բջիջները պարտավոր են անհապաղ աշխուժացնել գյուղի վրա իրենց ստանձնած շեֆության աշխատանքը, ամուր կապ և ոգնություն սահմանել կոլտնտեսային յենթաշեֆ բջիջներին: Շեֆության գործի վրա այժմ պետք է հատուկ ուշադրություն դարձնել:

Գյուղական կազմակերպությունների աշխատանքում դժվարություններ շատ կան: Մեր առաջ կանգնած խնդիրները խոշոր են, բարդ և պատասխանատու:

Բայց հենց նրա համար է կոմյերիտմիությունը լենինյան անունը կրում, վորպեսզի չվախենա այդ դժվարություններից, հաղթահարի նրանց, վանդ չառնելով այն բանի առաջ, վոր պետք է «գնալ ընդդեմ հոսանքի, յերբ այդ պահանջում է իրադրությունը, յերբ այդ են պահանջում կուսակցության շահերը» (Ստալին):

Հենց նրա համար է կոմյերիտմիությունը լենինյան անունը կրում, վորպեսզի մարտակամորեն լուծի այն խնդիրները, վոր կուսակցությունն է դնում նրա առաջ, Լենինի կուսակցության գործի, ամբողջ աշխարհում սոցիալիզմի հաղթանակի համար տալով իր ուժերը և եներգիան ամբողջությամբ:

Կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների կոմյերիտականներին տրված է սոցշինարարության պատասխանատու բնագավառը: Ամրապնդել կոլտնտեսությունները, ջարդ ու փշուր անել կուլակության փշրանքները, բարձրացնել մեր սոցիալիստական դաշտերի բերքատվությունը, մինչև վերջը նվիրված լինել մեր պրոլետարական պետության գործին ու շահերին, գործով ապացուցել իր հավատարմությունը բայլշևիկյան մեր կուսակցության գլխավոր գծին—ահա թե ինչ է պահանջվում գյուղական յուրաքանչյուր կոմյերիտականից:

Առաջ գնալ դեպի նոր հաջողություններ, մեր փառապանծ բայլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ, կուսակցության սիրելի առաջնորդ և համաշխարհային պրոլետարիատի ընկեր Ստալինի ղեկավարությամբ—այսպիսին է լենինյան կոմյերիտմիության ուղին, այսպիսին է մեր հաղթանակների ուղին՝ սոցիալիզմի համար մղվող պայքարում:

Ս. ԿԱԼԵՍՆԻՉԵՆԿՈ

-30-

ՀՀ Ազգային գրադարան
NL0977031

11
26570

Գին՝ 60 կ.

Что сказал VI пленум ЦК ВЛКСМ о задачах комсомола в деревне

Издательство ЦККП (б) А
Партиздат. 1933 Эривань